2013, ԴԵԿՏԵՄԲԵՐ Ա, ԹԻՎ 23 (403)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՇԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

6 դեկտեմբերի

Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի անդամներին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիա-Հայաստան պատգամավորական բարեկամության խմբի ներկայացուցիչներին՝ գլխավորությամբ խմբի ղեկավար Ռընե Ռուքեի եւ ուղեկցությամբ ԱԺ պատգամավոր Արա Բաբլոյանի: Խմբի կազմում էին նաեւ բարեկամության խմբի ղեկավարի տեղակալներ Վալերի Բուայեն, Գի Տիսիեն եւ բարեկամության խմբի վարչական քարտուղար Ժան-Պիեռ Դելանոյան:

Հայոց Հայրապետն իր օրհնությունն ու գնահատանքը բերեց Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի անդամներին՝ կարեւորելով վերջիններիս կողմից հայ ժողովրդի նկատմամբ ցուցաբերվող ազնիվ օգտակարությունն ու նվիրումը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ընդգծելով այն արդյունավոր համագործակցությունը, որ ձեւավորվել է շնորհիվ Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի, հույս հայտնեց, որ այն մշտապես պիտի նպաստի բարեկամ երկու ժողովուրդների հարաբերությունների զորացմանը:

Այնուհետեւ խմբի ղեկավար Ռընե Ռուքեն անդրադարձ կատարեց եղբայրական կապերի առավել սերտացման ծրագրերին եւ խմբի առաքելությանը:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց Ֆրանսիայի պատգամավորների հարցերին, որոնք վերաբերում էին Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի առիթով Հայ Եկեղեցու կողմից իրականացվելիք միջոցառումներին, ինչպես նաեւ հայ-թուրքական ու հայ-ադրբեջանական հարաբերություններին: Զրույցի ընթացքում մտահոգություն արտահայտվեց Սիրիայում տիրող ծանր իրավիճակի եւ քրիստոնեական համայնքների վտանգված լինելու մասին, անդրադարձ կատարվեց սիրիահայ համայնքին, ինչպես նաեւ՝ Հայ Եկեղեցու կողմից Հայաստանում ապաստան գտած սիրիահայությանը ցուցաբերվող զորակցությանը:

9 դեկտեմբերի

Ռումինիայի դեսպանին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Ռումինիայի նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Սորին Վասիլեին:

Իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերելով նորանշանակ դեսպանին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ անդրադարձավ երկու երկրների ու ժողովուրդների ջերմ եւ սերտ հարաբերություններին եւ վստահությամբ նշեց, որ դեսպանն իր գործունեությամբ կնպաստի դրանց առավել արդյունավորմանը: Այնուհետեւ իր խոսքում Նորին Սրբությունն ընդգծեց այդ կապերի զորացման գործում Ռումինիայի հայ համայնքի կարեւոր դերակատարությունը: Հայոց Հայրապետը գնահատանքով արձանագրեց, որ հայ ժողովրդի զավակները, հաստատվելով Ռումինիայում դեռ վաղ միջնադարում, իրենց ծառայասեր աշխատանքով նշանակալի ներդրում են ունեցել երկրի կյանքում, որի վկայությունը Ռումինիան զարդարող հայ ժողովրդի մտքի եւ հոգու արգասիքներն ու կերտած արժեքներն են:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Ռումինիայի դեսպանն անդրադարձան նաեւ Հայ Առաքելական եւ Ռումին Ուղղափառ Եկեղեցիների ջերմ հարաբերություններին, կարեւորեցին Եկեղեցիների դերակատարությունը ժողովուրդների կյանքում՝ որպես հասարակության բարոյական նկարագրի կերտող ու պետականության զորացման երաշխիք:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետը մաղթեց, որ Աստված օրհնի երկու եղբայր ժողովուրդների դարավոր բարեկամությունը եւ բարգավաճ կյանք պարգեւի նրանց:

ՆԱ ԽՆԴՐԵՑ ԱՍՏԾՈ ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

> *Աստված պիտի գտնի նրանց, ովքեր չեն փորձում Նրան, եւ պիտի երեւա նրանց, ովքեր թերահավատ չեն Նրա նկատմամբ:*
>
> ***(Սող. Ա 2)***

Սողոմոնը (եբր.՝ Շլոմո) հաջորդում է հորը՝ նշանավոր Դավիթ արքային եւ թագավորում Ք. ա. 965-928 թթ.: Նա փառքի է արժանանում իր իմաստության, բարեպաշտության, արդարամտության շնորհիվ: Սողոմոն Իմաստունի օրոք Իսրայելի եւ Հուդայի միացյալ թագավորությունը հզորանում է, կառուցվում է Երուսաղեմի տաճարը, զարթոնք է ապրում տնտեսական կյանքը: Սակայն այս մասին գրվել են բազմաթիվ եւ տարաբնույթ երկեր, հոդվածներ, ուստի մեր նպատակն է անդրադառնալ մեծ արքայի բարոյական նկարագրին, մարդկային թուլություններին, Աստծո հետ նրա ունեցած հարաբերություններին:

Սուրբ Գիրքը վկայում է. «Տերը Սողոմոնին երեւաց գիշերվա քնի մեջ: Տերն ասաց Սողոմոնին. «Որեւէ բան խնդրի՛ր քեզ համար»: Սողոմոնն ասաց. «Դու մեծ ողորմածություն արեցիր իմ հայր Դավթին, եւ նա էլ Քեզ հետ, Քո առջեւից ընթացավ ճշմարտությամբ, արդարությամբ ու սրտի մաքրությամբ, եւ դրա համար ցույց տվեցիր այս մեծ ողորմածությունը՝ նրա որդուն նստեցրիր նրա գահին, ինչպես որ է այսօր: Արդ, իմ Տե՛ր Աստված, Դու Քո ծառային դրել ես իմ հայր Դավթի փոխարեն, իսկ **ես դեռ պատանի եմ եւ չգիտեմ իմ անելիքը**: **Քո ծառան** քո ընտրած ժողովրդի մեջ է, մի ժողովուրդ, որը բազմամարդ է, անթիվ ու անհամար: **Իմաստությո՛ւն տուր քո ծառային, որ նա կարողանա արդարությամբ լսել ու դատել քո ժողովրդին, խելամտություն ունենա տարբերելու բարին ու չարը, որովհետեւ ո՞վ կարող է ղեկավարել Քո այս բազմամարդ ժողովրդին»**: Տիրոջը հաճելի եղավ Սողոմոնի այս խնդրանքը, եւ Տերն ասաց նրան. «Քանի որ դու այդ բանը խնդրեցիր ինձնից, **խնդրեցիր ոչ թե**

կյանքի երկար օրեր, հարստություն կամ քո թշնամիների մահը, այլ խնդրեցիր խելամտություն՝ դատ անելու, ուստի քո ասածի համաձայն եմ վարվելու. քեզ տալիս եմ իմաստուն ու հանճարեղ միտք, այնպես որ ո՛չ քեզնից առաջ է քո նմանը եղել, եւ ո՛չ էլ քեզնից հետո քո նմանը կհայտնվի:

Շարունակությունը՝ էջ 2

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Ֆրանսիա

Դեկտեմբերի 12-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Ֆրանսիայի հայոց թեմ, ուր նույն օրը Փարիզում Նորին Սրբությունը ներկա գտնվեց իր բարձր հովանու ներքո կազմակերպված աշխարհահռչակ օպերային երգչուհի Մոնսերատ Կաբալյեի մեծարման երեկույթին:

Այցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպումներ ունեցավ թեմական խորհրդի, ինչպես նաեւ եկեղեցական վարչական անդամների հետ:

ՆԱ ԽՆԴՐԵՑ ԱՍՏԾՈ ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Սկիզբը՝ էջ 1

Քեզ տալիս եմ նաեւ այն, ինչ դու չխնդրեցիր՝ հարստություն ու փառք, այնպես որ քո ապրած կյանքի օրերին թագավորներից ոչ ոք չի լինելու քեզ նման: Եվ եթե ընթանաս Իմ ճանապարհով, կատարես Իմ հրամաններն ու պատվիրանները, ինչպես ընթացել էր քո հայր Դավիթը, ապա քո կյանքի օրերը կերկարացնեմ» (Գ Թագ. Գ 5-15):

Սողոմոնը հրեից արքան էր, նա թագավորի զավակ էր եւ ամուսնացած էր փարավոնի դստեր հետ. «...նա խնամիություն հաստատեց Եգիպտոսի արքա փարավոնի հետ, կին առավ նրա դստերն ու բերեց Դավթի քաղաքը» (Գ Թագ. Գ 1):

Սակայն բոլորիս քաջ հայտնի է, որ մարդ արարածը մշտապես ձգտում է առավել մեծ հարստություն կուտակելու, անսահման իշխանություն ձեռք բերելու, փառք ու հռչակ վայելելու: Հարստության, փառքի, իշխանության, բարեկեցիկ կյանքի վերաբերյալ բազմաթիվ հատվածներ կան Առակաց գրքում. «Չարաչք մարդը շտապում է հարստանալ, բայց չգիտի, որ ողորմած մարդը պիտի հաղթի իրեն» (Առակ. ԻԸ 22). «Բարի անունը լավ է մեծ հարստությունից, ընտիր շնորհքը՝ արծաթից ու ոսկուց» (Առակ. ԻԲ 1). «Ճշմարտության հետ գնացող աղքատն ավելի լավ է սրտի հետ ընթացող հարստից» (Առակ. ԻԸ 6):

Սողոմոն Իմաստունը քաջ գիտակցում էր, որ հարստությունն ինքնին արժեք չէ եւ չափազանց խաբուսիկ է. այն թույլ է տալիս մարդուն առանց բարոյական եւ նյութական որեւէ նեղություն կրելու բարեգործություն անել: Մեծ ունեցվածքը կուրացնում է մարդուն՝ խանգարելով իրական, մնայուն արժեքները տեսնելուն: Այնինչ Սուրբ Գրքում գրված է, որ բարի անունը լավ է մեծ հարստությունից. հարստությունը դեպի աղքատություն տանող ամենակարճ ճանապարհն է... Բարությունը թանկ է ոսկուց, իմաստությունը՝ գանձերից: Աստված փորձում էր Սողոմոնին, երբ հարցնում էր՝ որեւէ բան խնդրի՛ր քեզ համար. դա է վկայում Տիրոջ պատասխանը. «Քանի որ դու այդ բանը խնդրեցիր Ինձնից, խնդրեցիր ոչ թե կյանքի երկար օրեր, հարստություն կամ քո թշնամիների մահ, այլ խնդրեցիր խելամտություն՝ դատ անելու, ուստի քո ասածի համաձայն եմ վարվելու...» (Դ Թագ. Գ 11-13): Աստվածաշնչում բազմաթիվ դեպքերի ենք հանդիպում, երբ Տերն այս կամ այն կերպ փորձում է մարդկանց. Նա յուրաքանչյուրիս շնորհել է ամենաթանկն ու կարեւորը՝ ազատ կամք, ուստի ակնկալում է, որ ընտրենք դեպի Իրեն տանող ճանապարհը, արժեւորենք հոգեւորն ու ճշմարիտը: Աստվածաշնչյան բազմաթիվ հատվածներ հաստատում են վերոգրյալը. Տերը բարու եւ չարի գիտության ծառը տնկում է դրախտի մեջտեղում (հմմտ. Ծնն. Բ 9), փորձում է Աբրահամին՝ պատվիրելով զոհաբերել սեփական որդուն, Հոբը եւս փորձությունների է ենթարկվում, իսկ Աստծո Որդին, քառասուն օր գտնվելով անապատում, փորձվում է սատանայից (հմմտ. Մատթ. Դ, Մարկ. Ա 12, Ղուկ. Դ): Ահա նաեւ Հովհաննու Ավետարանից փորձությանը վերաբերող մի հատված. «Հիսուս Իր աչքերը վեր բարձրացրեց եւ տեսավ, որ բազում ժողովուրդ է գալիս Իր մոտ: Փիլիպպոսին ասաց. «Որտեղի՞ց հաց պիտի գտնենք, որ դրանք ուտեն»: **Այս ասում էր՝ նրան փորձելու համար, բայց Ինքը գիտեր, թե ինչ էր անելու**» (Հովհ. Զ. 5-7):

Սողոմոն արքան հստակ գիտակցում էր՝ ինչ է խնդրում Տիրոջից. նա տիեզերական Մտքի իմաստությունն էր փնտրում՝ արդարությամբ դատելու եւ ղեկավարելու սեփական ժողովրդին, որի հետագա ընթացքն իրեն էր վստահված: Մարդու իրական էությունը բացահայտվում է, երբ նա իշխանություն է ստանում: Սովորաբար աղոթելիս մենք՝ մահկանացուներս, խնդրում ենք հարստություն, փառք, իշխանություն, երկար կյանք, հակառակորդների պարտություն, երազանքների իրականացում՝ մոռանալով իմաստության, արդարամտության եւ աստվածային կամքի մասին. երբեւէ խնդրե՞լ ենք, որ մեր կյանքում Աստծո կամքը կատարվի եւ ոչ թե մերը: Սողոմոնը ոչ թե ցանկալիի հետ խնդրեց նաեւ իմաստություն, այլ **հրաժարվեց ամեն ինչից՝ ընտրելով միայն իմաստությունը**: Եվ Աստված տեսավ Սողոմոնի սիրտը, քանզի Նա նայում է ոչ թե մեր դեմքին, ինչպես մենք՝ մահկանացուներս, այլ՝ սրտին. «Նրա տեսքին մի՛ նայիր եւ ոչ էլ հասակի բարձրությանը, քանզի ես նրան չեմ ընտրել: Աստված այնպես չի նկատում, ինչպես նկատում են մարդիկ. մարդիկ երեսին են նայում, իսկ Աստված՝ սրտին» (Ա Թագ. ԺԶ 7): Տերը կամենում է, որ գնահատենք ճշմարիտ արժեքները եւ խնդրենք հոգեւոր գանձեր՝ վստահ լինելով, որ Ինքը կհոգա մեր մնացյալ կարիքները. «Նախ խնդրեցե՛ք Աստծու արքայությունը եւ Նրա արդարությունը, եւ այդ բոլորը Աստված ձեզ ավելիով կտա: Այսուհետեւ հոգ մի՛ արեք վաղվա օրվա մասին, որովհետեւ վաղվա օրը իր մասին կհոգա. օրվա հոգսը բավ է օրվա համար» (Մատթ. Զ 33, 34): Սողոմոնը հասկանում էր, որ չի կարելի նախընտրությունը տալ նյութական, անցողիկին՝ հարստությանը եւ փառքին, քանզի դրանք կարող են գայթակղել եւ մոլորեցնել: Պողոս առաքյալը նամակ է գրում իր աշակերտ Տիմոթեոսին՝ զգուշացնելով հարստության վտանգավորության մասին. «Այլ ունենք կերակուր եւ հանդերձներ ու դրանցով էլ բավականանք: Իսկ ովքեր հարստանալ են ուզում, ընկնում են փորձության, որոգայթի եւ բազում անմիտ ու վնասակար ցանկությունների մեջ, որոնք ընկղմում-տանում են մարդկանց դեպի կործանում եւ դեպի կորուստ, որովհետեւ բոլոր չարիքների արմատը փողասիրությունն է, որին ոմանք ձգտելով՝ մոլորվեցին հավատից ու իրենք իրենց գցեցին բազում ցավերի մեջ» (Ա Տիմ. Զ 8-11):

Սողոմոն արքան Աստծուց միայն իմաստություն խնդրեց, եւ այն տրվեց նրան. դա են վկայում Աստվածաշնչի Գ Թագ. Գ 16-28 համարները, որտեղ նկարագրվում է, թե ինչպես էին երկու առնառակ կին կռվում մանկան համար, եւ թե ինչպես արքան կարողացավ արդար վճիռ կայացնել. «Եվ ամբողջ Իսրայելը, լսելով արքայի վճռած դատաստանը, երկնչեց արքայից, քանզի տեսավ, որ նրա մեջ դատաստան վարելու Աստծու իմաստությունը կար» (28):

Սուրբգրային բազում հատվածներ հստակ ցույց են տալիս, թե Արարիչն ինչ է ակնկալում Իր իսկ կողմից արարված մարդուց: Սողոմոնի մասին ընթերցելով՝ համոզվում ենք, որ Աստծո պարգեւած իմաստությունն արժեքավոր է երկրային անցողիկ գանձերից. սա է հաստատում նաեւ Կորնթացիների առաջին թուղթը. «...որովհետեւ Աստծու հիմարն ավելի իմաստուն է, քան մարդկային իմաստությունը, եւ Աստծու տկարն ավելի զորեղ է, քան մարդկային զորությունը» (Ա Կորնթ. Ա 25): Ամենուր փնտրենք Տիրոջ եւ ոչ թե մարդկային իմաստությունը, Նրա իմաստությունը խնդրենք մեր կյանքի, որոշումների, ծրագրերի, ապագայի համար: Սողոմոն արքան, ինչպես եւ Դանիել մարգարեն, Աստծո իմաստությունն էր խնդրում ոչ թե մարդկանց առջեւ փառք եւ հեղինակություն վայելելու, այլ՝ այդ իմաստությամբ ապրելու, առաջնորդվելու, դեպի Բարձրյալը տանող ճշմարիտ ուղին գտնելու համար:

Այս շարակարգում վերհիշենք նաեւ Պողոս առաքյալին. Տերն Ինքը դարձի բերեց նրան եւ օժտեց իմաստությամբ, Աստծո խոսքը քարոզելու, քրիստոնեական եկեղեցիներ (համայնքներ) հիմնելու շնորհով (Գործք Թ.): Պողոսը Տիրոջը ծառայեց ինքնամերժումով եւ անմնացորդ նվիրումով՝ մշտապես փնտրելով Նրա կամքը, գիտակցելով խոնարհության կարեւորությունը. «Բայց ինչ որ ինձ համար շահ էր, այն վնաս համարեցի Քրիստոսի համար: Եվ ամեն բան, արդարեւ, վնաս եմ համարում մեր Տեր Հիսուս Քրիստոսի գերազանց գիտության համար: Նրա համար ամեն ինչից զրկվեցի,- եւ այդ բոլորը աղբ եմ համարում,- որպեսզի շահեմ Քրիստոսին եւ գտնվեմ Նրա մեջ. ո՛չ թե նրա համար, որ ունենամ իմ արդարությունը, որ օրենքից է, այլ Քրիստոսի հավատից եղած արդարությունը, որ Աստծուց եկող արդարությունն է՝ հավատով, որպեսզի ճանաչեմ Նրան եւ Նրա հարության զորությունը ու մասնակից լինեմ Նրա չարչարանքներին, կերպարանակից՝ Նրա մահվան, որպեսզի հասնեմ մեռելներից հարություն առնելուն» (Փիլիպ. Գ 7-11):

Կրկին անդրադառնանք Սողոմոն Իմաստունին. նա ցանկանում էր ավարտել Տիրոջ տաճարի կառուցումը, որը շարունակվում էր գրեթե յոթ տարի. «...Սողոմոնը տաճարը կառուցեց յոթ տարում» (Գ Թագ. Գ 38): Գ Թագավորաց Ը գլխում տեսնում ենք, թե ինչպես էր Սողոմոն արքան փառաբանում Աստծուն, ներում հայցում իր ժողովրդի գործած մեղքերի համար, աղաչում լսել իր աղոթքը. **«Արդ, լսի՛ր քո ծառայի աղոթքներն ու իմ խնդրանքները, Տե՛ր Աստված Իսրայելի, լսի՛ր Քո ծառայի պաղատագին աղոթքները**, որ նա Քո առջեւ մատուցում է Քեզ» (Ը 28): Սողոմոնն աղոթում էր ամբողջ հոգով՝ խոնարհությամբ եւ ինքնամերժումով. «Երբ Տիրոջ զոհասեղանի առաջ ծնկաչոք ու ձեռքերը դեպի վեր տարածած Սողոմոնն ավարտեց Տիրոջն ուղղված այս բոլոր աղոթքներն ու աղերսանքները, կանգնեց ու մեծաձայն օրհնեց Իսրայելի ամբողջ ժողովրդին...» (Գ Թագ. Ը 54): Աստված տեսնում է արքայի սրտի խոնարհությունն ու հեզությունը, նրա նվիրումն ու Իսրայելի ժողովրդի գործած մեղքերի համար անկեղծ զղջումն ու ցավը եւ պատասխանում է նրան. «Լսեցի Իմ առջեւ արած աղոթքի ձայնդ ու կատարած պաղատանքներդ եւ արեցի այն ամենը, ինչ դու խնդրում էիր քո աղոթքներում. սրբագործեցի քո կառուցած տունը, որպեսզի Իմ անունը հավիտյան այնտեղ դրվի, Իմ աչքն ու սիրտն ընդմիշտ այնտեղ լինեն» (Գ Թագ. Թ 3): Երկնային Հայրը լսում է արքայի աղոթքը եւ պատասխանում. Տերը երկրորդ անգամ է հայտնվում նրան:

Շարունակությունը՝ էջ 3

Կարգալույծ է հռչակվել Տ. Եղիա աբեղա Խաչատրյանը

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի դեկտեմբերի 12-ի հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Տ. Եղիա աբեղա Խաչատրյանը՝ ուխտազանցության եւ եկեղեցականին անհարիր ընթացքի համար:

Տ. Եղիա աբեղա Խաչատրյանի հարցը քննության է առնվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գործող կարգապահական հանձնախմբի կողմից եւ ներկայացվել կարգալուծության:

Այսուհետ կարգալույծ եկեղեցականը դասվում է աշխարհականների շարքը՝ Արմեն Խաչատրյան ավազանի անունով:

Համաժողով Ծաղկաձորում

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնը, կարեւորելով կիրակնօրյա վարժարանների դերակատարությունը ծխական համայնքներում, տեղերում առկա խնդիրները վերհանելու եւ ծրագրային գործունեությունն առավել կանոնակարգելու նպատակով «Վորլդ Վիժն» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան գրասենյակի հետ համատեղ դեկտեմբերի 2-3-ը՝ մասնակցությամբ կիրակնօրյա վարժարանների գործունեությունը համակարգող հոգեւորականների, մանկավարժների եւ «Վորլդ Վիժն»-ի տարածքային զարգացման գրասենյակների ներկայացուցիչների, համաժողով անցկացրեց Ծաղկաձորում:

Համաժողովին բացման խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի ՔԴԿ բաժնի տնօրեն Վարդան վրդ. Նավասարդյանը, ով իր խոսքում կարեւորեց կիրակնօրյա դպրոցների առաքելությունը եւ անհրաժեշտությունը համայնքային կյանքում: Հայր սուրբն անդրադարձավ երկօրյա աշխատանքային հանդիպումների նպատակներին եւ անելիքներին, որոնք պետք է օգնեն առաջիկայում սպասվող երկամյա ռազմավարության մշակմանը՝ նախանշելու տարվելիք աշխատանքների ուղղությունները:

Համաժողովի շրջանակներում իրականացված խմբային համակողմանի քննարկումների եւ համապատասխան զեկուցումների արդյունքում վերհանվեցին կիրակնօրյա կրթօջախների առօրյա գործունեության ընթացքում հանդիպող կազմակերպչական, ծրագրային, բովանդակային, նյութատեխնիկական դժվարությունները, եւ առաջարկվեցին լուծման հնարավոր ուղիներ:

Լրատվական նյութերը՝
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

ՂՈՒԿԱՍ Ա ԿԱՐՆԵՅԻ
(1780-1799)

Սկիզբը՝ թիվ 21-22

Զաքարիայի վերադառնալուց հետո՝ 1782 թվին, Կ. Պոլսում տեղի ունեցան աղետաբեր հրդեհներ: Առաջինը եղավ Սամաթիայում հունիսի 28-ին՝ Վարդավառի պահոց երեքշաբթի օրը՝ գիշերվա ժամը 5-ին, եւ տեւեց 15 ժամ: Հուլիսի 12-ին՝ ցերեկվա ժամը 10-ին, սկսվեց եւ 25 ժամ մոլեգնեց Բալաթի հրդեհը: Էլ ավելի ահավոր եղավ երրորդը, որն սկսվեց օգոստոսի 10-ին՝ գիշերվա ժամը 2-ին, եւ շարունակվեց 66 ժամ: Այն սկսվեց Ջիբալի թաղից, հետո տարածվեց Այագաբու, Քոսթքա, Վլանկա, Ենիքաբու, Սամաթիա, Սիլիվրիքաբու եւ Եդիքուլե թաղերում՝ ավերելով 30.000-ից ավելի տներ, այսինքն՝ անապատի վերածվեց մայրաքաղաքի գրեթե կեսը: Հրդեհը պատուհասեց նաեւ այդ թաղերի հայկական մասերին, ինչը Զաքարիային ստիպեց նպաստամատույց քայլեր ձեռնարկել: Նա խորհրդակցեց ազգի մեծավորների հետ, սկսեց նշանակալից գումարներ հավաքել եւ բոլորին սնունդ ու պարեն բաշխել, իսկ անօթեւաններին վրաններ հատկացնել: Նամակ գրեց բոլոր արհեստավորական խմբերին՝ դրամ աղերսելով տուժածների համար: 72 համքարությունից 16 հոգուց բաղկացած հանձնաժողով կազմեց, որ նպաստները խղճի մտոք բաշխեն, եւ ինչ-որ չափով թեթեւացրեց նրանց վիճակը:

Այս ընթացքում կաթոլիկներն աշխատում էին հռոմեամետների համար տանելի դրություն ստեղծել՝ փորձելով իրար հարմարեցնել Հռոմի կրոնական պահանջները եւ օսմանյան օրենքները: Օսմանահպատակ քրիստոնյաների կացությունը ճշտված էր պատրիարքարաններով, եւ ամեն ինչ նրանց ձեռքով պետք է անցներ: Հարկ է նշել, որ Օսմանյան պետությունն այդ ժամանակ ճանաչում էր միայն հայկական եւ հունական պատրիարքությունները: Օրթոդոքս ուղղափառ բոլոր ազգությունները (հույներ, բուլղարներ, սերբեր, ալբանացիներ, վալաքներ, մոլդավներ եւ ուրիշներ) ենթարկվում էին հունական պատրիարքարանին: Իսկ արեւելյան քրիստոնյաները (հայեր, վրացիներ, ասորիներ, ղպտիներ, հաբեշներ եւ քաղդեացիներ), որ միաբնակ էին, ենթարկվում էին հայոց պատրիարքարանին: Հռոմեամետներն առանձին համայնք չէին կազմում եւ պարտավոր էին գործել հայոց պատրիարքարանի իշխանության ներքո: Լատին քարոզիչներն ու եվրոպական դեսպաններն աշխատում էին հռոմեամետ հայերին լրիվ գցել իրենց ազդեցության տակ եւ հեռացնել հայոց պատրիարքարանից, ուստի հայտարարում էին, որ հայադավանների հետ հաղորդակցվելը ներելի չէ: Նրանց ձայնակցում էին Պրոպագանդայի դպրոցի հայ աշակերտները, որոնք կազմում էին կոլեջցիներ կոչված խումբը: Մխիթարյանները կամենում էին զուտ հայկական կաթոլիկություն ստեղծել, հետն էլ՝ նրանց համար հանդարտ կացություն ապահովել, որ համապատասխանեին օսմանյան օրենքներին եւ հովանավորվեին հայոց կաթողիկոսության եւ պատրիարքության կողմից: Նրանք իրենց գրքերի վրա գրում էին հայոց կաթողիկոսների անունները, ինչով ճանաչում էին նրանց իշխանությունը: Սրանք աբբացիներն էին: Երկու ուղղություններն էլ ունեին իրենց համակիրները, սակայն բնիկ պոլսեցիներն առավելապես աբբացիների հետ էին, իսկ անկյուրացիք կոլեջցիների կողմն էին: Լիբանանի հայ Անտոնյանները շեշտված եւ վերջնական ուղղության չէին հարում: Աբբացիներին համակրում էին, բայց նրանց հետ բացարձակ գործակցելուց հեռու էին մնում: Տրիեստի Մխիթարյանները կոլեջցիների հետ էին:

Վենետիկի Մխիթարյանների որդեգրած ուղղությունը գալիս էր հիմնադիր Մխիթար Սեբաստացուց: Այդ ուղղության մեծ ջատագով էր Գեւորգ Այնթապցին, իսկ ավելի ուշ՝ Միքայել Չամչյանը: Նա իր գրվածքներով ցույց էր տալիս, որ հռոմեադավան հայերին չեն արգելվում Հայոց Եկեղեցու խորհուրդներն ընդունելը եւ կնունքի, ամուսնության կամ թաղման համար հայ հոգեւորականի դիմելը, քանի որ Հայոց Եկեղեցին իր վարդապետությամբ հռոմեականին օտար չէ եւ Հռոմի պապերի կողմից երբեք հերձվածող չի համարվել: Այդ նպատակին ծառայեց նրա «Պատմութիւն Հայոց» կոթողային՝ եռահատոր գործը: Այն ունի 2975 էջ եւ իր ժամանակի համար դարագլխային էր. ներկայացված է հայ ժողովրդի պատմությունը՝ «ի սկզբանէ աշխարհի ցամ տեառն 1784»: Չամչյանի գրչի տակ այն շրջանը, երբ երկու Եկեղեցիները հաշտ ու խաղաղ էին, ստանում է Հռոմին հնազանդվելու կերպարանք, միջին դարերում քաղաքական նպատակներով կատարված զիջումները կատարյալ հռոմեադավանություն են որակվում: Այլ Եկեղեցիների հետ հարաբերություններում Հայ Եկեղեցու ներողամտությունը մատուցվում է որպես հայադավանության ուրացում:



Չամչյանի մյուս գործը կոչվում էր «Վահան հաւատոյ»: Այստեղ ցույց էր տրվում հայոց ուղղափառությունը՝ սբ Գրիգոր Լուսավորչից սկսած մինչեւ իր օրերը: Ավելորդ է շեշտել, որ ուղղափառություն ասելով՝ Չամչյանը հասկանում էր հռոմեադավանություն: Աշխատությունը, որ սկսել էր գրել 1776 թվից, չի տպագրվել եւ բոլորովին անծանոթ է մնացել: Ուստի Օրմանյանը հարկ է համարում անդրադառնալ նրա գրչագիր օրինակին, որը պահվում է Անտոնյանների մատենադարանում: Այն բաղկացած է 924 էջից: Ունի համառոտ առաջաբան, որից հետո ներկայացվում է Հայաստանյայց Եկեղեցու կացությունը յուրաքանչյուր դարում: Երկրորդ մասում լուսաբանում է այն մոլորությունների իմաստը, որ չարախոսները բարդում էին հայոց ազգի վրա: Կարծեցյալ մոլորություններից ընտրում է տասը եւ ընդարձակ բացատրություններ տալով՝ հերքում: Դրանք են. 1. Քաղկեդոնի ժողովի մերժումը. 2. «Մի բնութիւն» բացատրությունը. 3. «Հոգւոյն սրբոյ ի Հօրէ» բղխումը. 4. Հանդերձյալ կյանքի վարդապետությունը. 5. «Սուրբ Աստուած ի խաչեցարը». 6. Ծննդյան տոնի օրը. 7. Անապակ բաժակը. 8. Վերջին օծումը. 9. Խտրական օրենքները. 10. Հռոմի նախագահությունը: Հավելված մի գլուխ եւս ունի. 11. «Յաղագս ազատ գոլոյն Եկեղեցւոյն Հայոց ի հերետիկոսութենէ եւ ի հերձուածողութենէ», որին մի մաս էլ է կցում. «Յաղագս քանի մի անձանց, զորոց չարախօսեն ոմանք», եւ հատկապես անդրադառնում է Պարսամին, Օձնեցուն, Որոտնեցուն, Գրիգոր Տաթեւացուն եւ Մովսես Տաթեւացուն: Չնայած աշխատության կազմին գրված է, թե պատրաստված է «ինքնակամ յօժարութեամբ եւ ստորագրութեամբ միաբանութեան իւրոյ», պահվել է որպես գաղտնիք, որովհետեւ ե՛ւ Չամչյանը, ե՛ւ միաբանությունը չեն համարձակվել պաշտոնապես ստանձնել մի խնդիր, որ ուրիշները կասկածելի են համարել: Նրանք պարզապես կամենում էին այդ գաղափարը ոչ պաշտոնապես տարածել: «Վահան հաւատոյ»-ն պետք է պաշտպանության ասպար կամ, որ ավելի ճիշտ է, պատրաստի զինանոց լիներ:

Այդ ժամանակ Վենետիկում ապրող մարքիզ Սերբոսը, որ Հովհաննես Սեղբոսյանն էր, հանձն առավ իր անունից դիմումներ հղել Հռոմի պապին եւ այդ դրության համար ձեռք բերել նրա հովանավորությունը, պաշտպանել այն Պրոպագանդայի ատյանում եւ գործը հաջողեցնելու համար բոլոր միջոցները կիրառել: Մի խոսքով՝ ոչինչ չխնայել լատինական ազդեցությունից անկախ հայ կաթոլիկություն կազմելու համար, որը կաթոլիկ լինի իր ներքին համոզումներով եւ իր հանրային եւ եկեղեցական հարաբերություններով չզատվի Հայոց Եկեղեցուց, կասկածներ առաջ չբերի Օսմանյան պետության աչքում եւ նրա կողմից բռնի միջոցներ կիրառելու առիթ չտա:

Շարունակությունը՝ էջ 4

ՆԱ ԽՆԴՐԵՑ ԱՍՏԾՈ ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Սկիզբը՝ էջ 2

Սակայն Սողոմոն Իմաստունը, լինելով մի ողջ թագավորության հզոր, մեծ փառք եւ հեղինակություն վայելող արքա, չի կարողանում հաղթահարել սեփական արատավոր թուլությունները եւ կործանվում է... Նա կնամոլ էր եւ կնության է առնում շատ օտար կանանց. «Նա յոթ հարյուր կին եւ երեք հարյուր հարճ ուներ, եւ կանայք խոտորեցրին նրա սիրտը: Սողոմոնի ծերության օրերին կանայք նրա սիրտը խոտորեցրին **օտար աստվածների կողմը, եւ նա ամբողջ հոգով չկապվեց իր Տեր Աստծու հետ**, ինչպես իր հոր՝ Դավթի սիրտն էր կապված» (Գ Թագ. ԺԱ 3, 4): Ուստի՝ «Տերը բարկացավ Սողոմոնի վրա, որովհետեւ նրա սիրտը խոտորվել էր Իսրայելի Տեր Աստծուց, Որը երկու անգամ երեւացել ու պատվիրել էր նրան, որ օտար աստվածների հետեւից ամենեւին չգնա, այլ պահի եւ կատարի այն, ինչ Տեր Աստված պատվիրել էր նրան» (Գ Թագ. ԺԱ 9, 10):

Սողոմոն արքան, փաստորեն, չի կարողանում Տիրոջ պարգեւած իմաստությամբ հաղթահարել իր մարդկային արատավոր թուլությունները, խոտորվում է ճշմարիտ ուղուց, ընկնում մեղքերի հորձանուտը եւ կորցնում Արարչի սերն ու ապավինությունը... Ո՞րն էր այս ամենի պատճառը... Գուցե արքային կուրացնում են փառքն ու պատիվը, շլացնում՝ գանձերը եւ հարստությունը, գուցե մեղանչումի պատճառ են դառնում գոռոզամտությունն ու հպարտությունը... Այնուամենայնիվ, Սողոմոնը հեռացավ Աստծուց, երես թեքեց Նրանից եւ արդյունքում պատժվեց՝ զրկվելով թագավորությունից: Տերն այս մասին զգուշացրել էր. «Քեզ տալիս եմ նաեւ այն, ինչ դու չխնդրեցիր՝ հարստություն ու փառք, այնպես որ քո ապրած կյանքի օրերին թագավորներից ոչ ոք չի լինելու քեզ նման: **Եվ եթե ընթանաս Իմ ճանապարհով, կատարես Իմ հրամաններն ու պատվիրանները, ինչպես ընթացել էր քո հայր Դավիթը, ապա քո կյանքի օրերը կերկարացնեմ**» (Գ Թագ. Գ 13, 14): Իսկ երկրորդ անգամ ասաց. «**Լսեցի Իմ առջեւ արած աղոթքի ձայնդ ու կատարած պաղատանքներդ եւ արեցի այն ամենը, ինչ դու խնդրում էիր քո աղոթքներում**. սրբագործեցի քո կառուցած տունը, որպեսզի Իմ անունը հավիտյան այնտեղ դրվի, Իմ աչքն ու սիրտն ընդմիշտ այնտեղ լինեն: **Եթե դու քո հայր Դավթի նման մաքուր սրտով, ուղիղ ճանապարհով ընթանաս Իմ առջեւից, կատարես այն ամենը, ինչ պատվիրեցի նրան, պահես Իմ հրամաններն ու պատվիրանները, ապա քո աթոռը Իսրայելի վրա հավիտյան կանգուն կպահեմ**, ինչպես խոստացել եմ քո հայր Դավթին՝ ասելով, թե՝ “Քո տոհմից առաջնորդ չի պակասելու Իսրայելի գահի վրա”: **Իսկ եթե դուք ու ձեր որդիները Ինձնից խոտորվեք, չպահեք Իմ պատվիրաններն ու հրամանները, որ Մովսեսը տվեց ձեզ, գնաք ու ծառայեք օտար աստվածներին, երկրպագեք նրանց, ապա երկրի երեսից կջնջեմ Իսրայել աշխարհը, որ տվել եմ նրանց: Իմ անվան համար սրբագործված այս տունը աչքից կգցեմ, Իսրայելը բոլոր ժողովուրդների մոտ խայտառակ ու ծաղրի առարկա կլինի»** (Գ Թագ. Թ 3-7): Երկնային Հայրը մշտապես կամենում է օգնել եւ օրհնել մեզ՝ Իր պատկերով եւ նմանությամբ արարված մարդուն. մենք օժտված ենք Աստծո ամենամեծ շնորհով՝ ազատ կամքով, ուստի կարող ենք ընտրել դեպի Նա՝ հավիտենական կյանք տանող կամ Նրանից հեռացնող եւ գեհենի ճիրանները նետող ճանապարհը: Եթե դիմակայենք երկրային բազմատեսակ փորձություններին եւ պահպանենք առ Աստված ունեցած մեր հավատը, հավատարմությունն ու նվիրումը, կարժանանանք աստվածային օրհնությանը, իսկ եթե հեռանանք Նրանից՝ ընտրելով չարի ճանապարհները, կզրկվենք Տիրոջ ապավինությունից եւ շնորհներից: Սա է վկայում Սողոմոն Իմաստունի կյանքը. Աստված է օրհնում եւ բարձրացնում կամ նզովում եւ պատժում մարդուն, քանզի Նա է ամենայնի Արարիչը եւ ճշմարիտ Դատավորը: Տերը լսում էր Սողոմոնի աղոթքները, պատասխանում նրա խնդրանքներին՝ զգուշացնելով պահպանել արդարամտությունը եւ հավատարմությունը, սակայն վերջինս գայթակղվեց եւ թաթախվեց մեղքերի մեջ: Արքան սկսում է երկրպագել այլ աստվածների եւ տարբեր կուռքերի. «Սողոմոնը չարություն գործեց Աստծու առաջ եւ չընթացավ Տիրոջ ճանապարհով, ինչպես որ ընթացել էր իր հայր Դավիթը» (Գ Թագ. ԺԱ 6): Եվ ահա զրկվեց Աստծո օրհնությունից եւ ողորմածությունից. «**Քանի որ այդպես վարվեցիր՝ չպահեցիր Իմ հրամաններն ու պատվիրանները, որ պատգամել էի քեզ,** Ես կխլեմ թագավորությունը քո ձեռքից եւ այն կտամ քո ծառային» (Գ Թագ. ԺԱ 11):

Սողոմոն Իմաստունի օրինակը մեզ՝ քրիստոնյաներիս ցույց է տալիս, որ հավատով, նվիրումով եւ խոնարհությամբ ապրած կյանքը պետք է նույն կերպ էլ ավարտել՝ մշտապես հիշելով Աստծո հետ ունեցած մեծ Ուխտի մասին: Հիշենք նաեւ, որ հեզությունը, արդարամտությունը, հավատարմությունը, անսասան հավատն ու ինքնամերժումն են մեզ մոտեցնում Տիրոջը: Լսենք Նրա խոսքը. «**Եթե դու ուղիղ ճանապարհով ընթանաս Իմ առջեւից, կատարես այն ամենը, ինչ պատվիրեցի, պահես Իմ հրամաններն ու պատվիրանները...**», եւ ամենագութ Տերը կփարվի մեզ իր հայրական սիրով եւ ներողամտությամբ:

Արփինե ՉԱՆԹԻԿՅԱՆ

ԹԱՏԵՐԳՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Սկիզբը՝ թիվ 22

Կատակերգության սահմաններում այլ սկզբունքներով է առաջնորդվում **Ա. Պապայանը**: Քննադատելով մերժելին՝ նա դրան հակադրում է կյանքի ժողովրդական առողջ տարերքը: Ասվածի վկայություններն են 1970-ական թթ. գրած «Աշխարհին, այո, շուռ է եկել» (1976), «Իրարանցում վարպետ Մարգարի տանը» (1969), «Արտասահմանյան փեսացու» (1970), «Գնա մեռի, արի սիրեմ» կատակերգությունները:

Երեք որդիների ամուսնության շուրջ համախմբված դեպքերի ընթացքում ներկայացվում է շինարար վարպետ Մարգարի եւ նրա կնոջ՝ Նուբարի ընտանիքը: Մարգարն ու Նուբարը կյանքի դժվար ճանապարհ անցած սերնդի ներկայացուցիչներ են, որ տեսել են գաղթ ու եղեռն, բայց եւ պահպանել ապրելու բերկրանքը, հոգու կենսահաստատ ուժը: Նրանք եւ նրանց որդիները ժողովրդական տարերքի ծնունդ են՝ անպաճույճ, ուղղամիտ մարդիկ: Դեպքերը սրվում են՝ կապված ավագ որդու ամուսնության հետ: Կշեռքի երկու նժարին են դրվում մի կողմից՝ պարզ մարդկային բնավորությունները՝ հանձին Մարգարի ընտանիքի, մյուս կողմից՝ Շմավոնի եւ Վիկտորյայի քաղքենիացած հաշվենկատ ընտանիքը, որոնց աղջիկը՝ Վարդուհին, եւ Մարգարի որդի Օհանը սիրում են իրար:

Ժիրայր Անանյան

Փորձությունների միջով անցնելով, ի վերջո, հաղթում է սերը՝ շուռ տալով կյանքի սանդուղքով վեր բարձրացած, բայց բարոյական նկարագիրը կորցրած մարդկանց պատկերացումը կյանքի մասին: «Աշխարհը շուռ եկավ, աշխարհն իր տեղն ընկավ»,- ամփոփում է Նուբարը:

Սրա անմիջական շարունակությունն է «Իրարանցում վարպետ Մարգարի տանը» կատակերգությունը: Մարգարի ընտանիքն արդեն դարձել է մի մեծ գերդաստան՝ հարսներ, թոռներ, բայց եւ պահպանել է սերն ու միաբանությունը: Եթե նախորդ կատակերգության մեջ հայրն էր որդիներին պսակում, ապա այստեղ որդիներն են ծնողների ոսկի հարսանիքն անում՝ նշելով նրանց ամուսնության 50-ամյակը:

Երկու կատակերգություններում ամբողջացող հերոսների նկարագիրը ի հայտ են բերում պայմանականություններից ձերբազատված մարդկային որոշակի բնավորություններ, որոնք, հակադրվելով կյանքի քաղքենիացող բարքերին, ժամանակակից հայ թատերգության մեջ ամրապնդում են ժողովրդական շունչն ու տարերքը: Ընդհանրապես, քաղքենիացող բարքերի դեմ ուղղված ծաղրը Ա. Պապայանի ստեղծագործության գլխավոր ուղղությունն է, որ բնորոշ է նաեւ նրա մյուս երկերին:

«Արտասահմանյան փեսացուն», ըստ բնույթի, ֆարս է: Փեփրոնի ուշք ու միտքը արտասահմանն է: Նրա համար ամեն ինչ պիտի արտասահմանյան լինի՝ անգամ փեսացուն: Այդ միտքը նրա կյանքի նպատակն է: Այս դեպքում եւս, զավեշտալի գործողությունների միջով անցնելուց հետո, հանձին ճշմարիտ սիրո՝ հաղթում է կյանքի առողջ տրամաբանությունը:

Կատակերգության սահմաններում ընտանեկան կյանքի մի ծանր դրամա է պատկերված «Գնա մեռի, արի սիրեմ» գործում: Միայնակ, թոշակառու հայր, երկու ամուսնացած եւ դիրք ունեցող որդիներ, ծնողի հանդեպ որդիական սիրո զեղման ցույցեր, բայց եւ հոգեբանական ու կենցաղային խզում երկու սերունդների միջեւ: Հայրը հիվանդ է ձեւանում, փորձում որդիների հավատարմությունը, բայց որդիներից ոչ մեկը նրան տեղ չի տալիս իր տանը: Նրա խնամակալները մնում են սոսկ հարեւանները: Հայրը դիմում է վերջին քայլին՝ ձեւանում է մահացած, եւ ահա որդիները, հանուն իրենց պատվի, ամեն մեկն ինքն է ջանում իր տնից թաղել նրան: Հեղինակն ըստ ամենայնի հոգեբանորեն հիմնավորում է «Գնա մեռի, արի սիրեմ» ժողովրդական խոսքը:

Կյանքի ժողովրդական տարերքի պահպանումն առկա է նաեւ **Գ. Հարությունյանի** «Ղազարը գնում է պատերազմ» (1967), «Հարսնացու հյուսիսից» (1972), «Բախտավոր մարդիկ» (1985) կատակերգությունների մեջ:

Արտաշես Քալանթարյան

Առաջինի դեպքերը տեղի են ունենում 1920 թ.: Պատկերված են Հայաստանի Հանրապետությունը, ժողովրդի քաղաքական ծանր կացությունը, զինվորական վերնախավի հայրենասիրական ճառերի առատությունն ու այդ մթնոլորտում կամավոր գրված հայ գյուղացի Ղազարի զինվորական անվարժ «գործունեությունը»: Քաղաքական երգիծանքն ընդունում է կենցաղային երանգավորում, ինչն էլ ապահովում է դրության եւ խոսքի կոմիզմի առատությունը: Ի վերջո, Ղազարը հայտնվում է դասալիքի վիճակում, նրան սպառնում է մահապատիժ, բայց գալիս է Հայաստանի խորհրդայնացման պահը, Ղազարն ազատվում է գերությունից, դառնում կարմիրբանակային եւ վերադառնում իր Հայաստանը (այդպես է եւ նրա կնոջ անունը):

Հերոսների կենցաղային հարաբերություններն ու խոսքի երգիծական երանգավորումն են բնորոշում նաեւ «Հարսնացու հյուսիսից» կատակերգության բնույթը: Նյութը այս է. մերձմոսկովյան շրջաններից մեկում զինվորական ծառայության մեջ գտնվող հայ պատանի Արտակը սիրահարվում է մի ռուս աղջկա՝ Վալյային: Արտակի ծնողները, ազգականները գնում են աղջկան ուզելու եւ, ի վերջո, աղջկա մորդիմադրությունը հաղթահարելով՝ նշանում իրենց հարսնացուին եւ զորացրված Արտակի հետ մեկտեղ վերադառնում Հայաստան: Այս ընթացքում ծիծաղելի խոսք ու գրույցի, շարժ ու ձեւի, փոխադարձ վեճերի, բնավորության մանրամասների մեջ երեւում են թե՛ Արտակի ծնողները՝ Մուրադն ու Արուսյակը, եւ թե՛ հորեղբայր Ազատը, մորեղբայր Սերոբը ու փեսա Երվանդը: Հատկապես օտար միջավայրում սրանցից ամեն մեկը ջանում է ցույց տալ իրեն, ինչն էլ ստեղծում է ծիծաղելի վիճակներ:

Նույն կենցաղային երգիծանքն է ընթացք տալիս նաեւ «Բախտավոր մարդիկ» կատակերգությանը: Բագրատին, հակառակ իր կամքի, ուղարկել են կենսաթոշակի: Նրա տրամադրությունն ընկած է: Բայց, ահա, մարդը վիճակախաղի տոմսով մեքենա է շահում եւ նոր հոգսերը, կապված մեքենայի խնամքի, մեքենան հարեւան-բարեկամներին ծառայեցնելու հետ, լցնում են նրա կյանքի դատարկված տարածությունը: Բակի մարդկանց, հարեւանների ու բարեկամների միջավայրում եւ նրանց մասնակցությամբ ծայր են առնում ծիծաղաշարժ ու զվարճալի դեպքեր, որ ծավալվում են Բագրատի ու կնոջ՝ Աշխենի, Բագրատի ու կնոջ եղբոր՝ Խաչիկի միջեւ:

Շարունակությունը՝ էջ 6

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

ՂՈՒԿԱՍ Ա ԿԱՐՆԵՅԻ (1780-1799)

Սկիզբը՝ էջ 3

Ըստ այդմ էլ՝ Հովհաննես Սեղբոսյանը Պրոպագանդային տեղեկացրեց լատին հայերի ծանր վիճակը Թուրքիայում եւ խնդրեց հարցը պաշտոնապես քննել: Առաջարկն ընդունվեց, եւ 1783 թ. հոկտեմբերի 9-ին տպագրության թույլտվություն ստացվեց, եւ թերեւս տպագրված օրինակով պահանջը ներկայացվեց Հռոմում: Անունը Սեղբոսյանինն էր, սակայն գործի ետեւում վենետիկյան միաբանությունն էր: Խնդրվում էր, որ այս հարցով հրահանգներ տրվեն Կ. Պոլսի պապական փոխանորդին եւ լատին քարոզիչներին: Իրոք, լատին քարոզիչների եսասիրությունն էր պատճառը, որ իշխանությունները հալածում էին հռոմեադավաններին, քանի որ սրանք շարժում էին պետության կասկածամտությունը:

Հատկապես բարձրացվում էր երկու խնդիր. 1. Կներվե՞ն արդյոք հայ կաթոլիկները, եթե երբեմն մտնեն հայկական եկեղեցիներ եւ այնտեղ մասնակցեն կրոնական ինչ-ինչ արարողությունների ու թողնեն ողորմություն, որով կազատվեն շատ նեղություններից, եւ իրենց կաթոլիկությունը դավանեն խաղաղությամբ. 2. Հայ կաթոլիկներին կներվի՞ ինչ-ինչ տոնակատարությունների դեպքում համակերպվել Հայոց Եկեղեցու գործածած տոնացույցին՝ հաշվի առնելով, որ այն նախկին՝ հայ սուրբ հայրերի ընդունած տոնացույցն է: Ըստ էության՝ դա խնդրանք էր, որի ենթակայական պատասխանը պաշտպանված էր ընդարձակ հիմնավորումներով ու պատճառաբանություններով: Իր դիմումի մեջ Սեղբոսյանը խոստացել էր «Հայոց պատմութիւն» պատրաստել եւ ներկայացնել Պրոպագանդային: Եվ, իրոք, երեք տարի անց՝ 1786-ին, Սեղբոսյանի անունով Վենետիկում իտալերեն հրատարակվեց հայոց եռահատոր պատմությունը, որը, ըստ էության, կրկնում էր Միքայել Չամչյանի «Պատմութիւն Հայոց»-ը: Սակայն ձեւը եւ ոճը տարբեր էին, եւ զուտ պատմականից ավելի ջատագովական բնույթ ուներ, թե Հայոց Եկեղեցին Հռոմեականից չի հեռացել եւ ճշմարտությունը չի աղավաղել: Այն վեց մասի կամ գրքի էր բաժանված. 1. Հայաստանի աշխարհագրությունը. 2. Հայաստանի հին եւ նոր քաղաքական վիճակը. 3. Հայաստանում քրիստոնեության սկիզբն ու զարգացումը. 4. Հայ կաթողիկոսների շարքը. 5. Հայ Եկեղեցու ժողովները. 6. Հայ Եկեղեցու ծեսն ու սովորությունները: Աշխատության մեջ մեծ տեղ է տրված Գալանոս Կղեմեսի մեղադրանքները հերքելուն: Պարզ է, որ աշխատության մի մասը վիճաբանական է, որի մեջ օգտագործվել են «Վահան հաւատոյ»-ի շատ նյութեր: Դրանից զատ՝ ավելացված են կտորներ պապական կոնդակներից ու Պրոպագանդայի որոշումներից:

Ինչպես տեսնում ենք, Վենետիկի Մխիթարյանները մեծ եւ տքնաջան աշխատանք կատարեցին՝ իրենց տեսակետը տարածելու եւ, եթե հնար լիներ, հաստատելու համար: Այդ առիթով Սեղբոսյանը մեծ ծախսեր արեց: Աշխատությունն իրենը չէր, բայց նա իր վրա էր վերցրել դրա հեղինակության պատասխանատվությունը: Հետեւանքը եղավ խոր լռությունը: Աշխատությունը Հռոմի կողմից չդատապարտվեց եւ չմերժվեց, քանի որ նպատակը հայերին կաթոլիկության տանելն էր, սակայն չընդունվեց էլ, քանի որ փորձ էր արվում հայությունը պահելու եւ պաշտպանելու: Ավելին. լատինները շարունակեցին իրենց մոլեգին ընթացքը՝ հռոմեադավաններին մղելով հակազգային եւ հակապետական գործողությունների՝ առաջ բերելով թուրքական պետության կասկածամտությունը եւ հետապնդումները, եւ հայոց պատրիարքարանն էլ ստիպված էր լինում անընդմեջ դիմել պաշտպանողական միջոցների: Աբբացիների եւ կոլեջցիների միջեւ եղած տարբերությունը գնալով սաստկացավ եւ թույլ չտվեց, որ գոնե հռոմեադավան հատվածը խաղաղ կացություն ունենա: Զաքարիան էլ, երկրորդ անգամ գալով պատրիարքության, դավանանքի հարցում իր սկզբունքները պահպանեց, սակայն մեղմացրեց կեցվածքը կաթոլիկամետների հանդեպ՝ աշխատելով Հայոց Եկեղեցին ու հայ ազգը ներքնապես ուժեղացնել, քաջալերեց հայկական ուսումն ու առաջընթացը՝ հայերից կաթոլիկության հրապույրը հեռացնելու համար:

Շարունակելի

Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր

Փիթեր ԲԱԼԱՔՅԱՆԻ «ՃԱԿԱՏԱԳՐԻ ՍԵՎ ՇՈՒՆԸ»

1997 թ. ամերիկահայ բանաստեղծ եւ արձակագիր Փիթեր Բալաքյանը լույս է ընծայում «Ճակատագրի սեւ շունը» (Black Dog of Fate, New York, 292 p.) հուշագրությունը, որով կարծես նոր էջ է բացում հայոց ցեղասպանության թեման մարմնավորող երկերի շարքում: Հայոց ցեղասպանության թեմային են անդրադարձել բազմաթիվ ամերիկացի գրողներ, այդ թվում՝ այնպիսի կարկառուն դեմքեր, ինչպիսիք են Էլջին Գրոսքլոուսը, Լեւոն-Զավեն Սյուրմելյանը, Մայքլ Առլեն Կրտսերը եւ Փիթեր Նաջարյանը: Թվում է, թե մինչեւ 1997 թ. ամերիկացի գրողներն արդեն իսկ շատ բան էին ասել հայոց եղեռնի մասին: Բայց եւ այնպես հայոց ցեղասպանությանը նվիրված երկերի առավել մանրակրկիտ վերլուծությունը վկայում է, որ այդ թեման թեպետ բավականին խոր լուսաբանված, սակայն տակավին չսպառված թեմաների շարքին է պատկանում:

Փիթեր Բալաքյանի «Ճակատագրի սեւ շունը» հուշագրությունն արդիականության ոգով գրված ստեղծագործություն է, որն արտացոլում է ցեղասպանության հիմնախնդիրը՝ իր ողջ ծավալով ու բարդությամբ: Այն նաեւ խորհրդանշում է հայ ժողովրդի պատմությունը, նրա դժվարին ճակատագիրը, նրա գլխով անցած փորձությունները:

Փիթեր Բալաքյանի հուշագրությունը ոչ այնքան հաճախ հանդիպող գործերից է, որոնք օժտված են արժանիքների մի ամբողջ շարքով: Դատողությունների հստակությունն ու տրամաբանվածությունը, պատմական մեծ հենքի առկայությունը, կատարված վերլուծությունների հետեւողականությունը, պատմական հեռատեսությունը, լուսավորչական եւ քարոզչական մեծ արժեքը «Ճակատագրի սեւ շունը» երկի հատկանշական առանձնահատկություններն են: Ամերիկյան գրականության մեջ երբեւէ չէր ստեղծվել այնպիսի գրական երկ, որում հայոց ցեղասպանության պատմական ասպեկտն այնպիսի մեծ հաջողությամբ ներկայացված լիներ, ինչպես Փիթեր Բալաքյանի գրքում: Սփյուռքահայ գրողը շատ լավ է զգում պատմական նյութը: Օբյեկտիվորեն կշռադատելով բոլոր պատմական փաստերը՝ նա հանգում է ճիշտ եզրակացությունների եւ հստակ տարանջատում երեւույթների հուզական եւ տրամաբանական կողմերը:

«Ճակատագրի սեւ շունը» գրքում պատմությունն ու արվեստը միահյուսված են զարմանալի ներդաշնակությամբ, կան հոգեբանական խոր դիտարկումներ, մարդկային հոգեվիճակների ու տրամադրությունների փայլուն նկարագրություններ: Բացի այդ՝ հուշագրությունը հագեցած է գունագեղ ու միեւնույն ժամանակ ռեալիստական կերպարներով: Որպես օրինակ կարելի է բերել գրողի հոր՝ Ջերարդ Բալաքյանի եւ տատի՝ Նաֆինա Արուսյանի կերպարները:

Փիթեր Բալաքյանի երկը շատ խոր եւ հարուստ բովանդակություն ունի: Բավական է միայն ասել, որ նրանում լուսաբանված են այնպիսի ընդգրկուն թեմաներ, ինչպիսիք են ցեղասպանությունը եւ տարագրությունը: Սփյուռքահայ գրողը, խորապես թափանցելով այդ թեմաների մեջ, քննության է առել դրանց առնչվող շատ ու շատ հարցեր: Այս առումով «Ճակատագրի սեւ շունը» զգալիորեն նման է Մայքլ Առլեն Կրտսերի «Ուղեւորություն դեպի Արարատ» ինքնակենսագրական գրքին: Առլենի նման Բալաքյանը եւս հայոց ցեղասպանությունը պատկերել է մանրակրկիտ ու համակողմանի, սակայն առավել մեծ խստապահանջությամբ է մոտեցել պատմական նյութերի ընտրությանը, այդ իսկ պատճառով կարողացել է խուսափել ներքին հակասություններից:

«Ճակատագրի սեւ շունը» երկը կարծես հակիրճ հանրագիտարան լինի, որը ցանկացած օտարազգի ընթերցողի փայլուն հնարավորություն է ընձեռում օբյեկտիվ ու սպառիչ պատկերացում կազմելու հայ ժողովրդի մասին: Ամերիկահայ գրողի գրքում հայ ժողովրդի պատմությանը զուգընթաց ներկայացված են նաեւ հայերի մտածելակերպն ու հոգեբանությունը, բարքերն ու սովորույթները, բարոյական սկզբունքներն ու արժեհամակարգը, ինչպես նաեւ՝ ազգային կենսակերպը, նիստուկացը:

Հարկ է հավելել, որ «Ճակատագրի սեւ շունը», ի լրումն վերը նշված արժանիքների, ունի նաեւ քարոզչական մեծ նշանակություն: Ամերիկահայ գրողը փորձում է փաստերի լեզվով համոզել աշխարհին, որ 1915 թ. ողբերգական իրադարձությունները պետք է արժանանան անաչառ գնահատականի եւ խստագույն դատապարտման: Բանն այն է, որ հայոց ցեղասպանության համաշխարհային ճանաչման հարցը գրեթե մեկ դար տարաբնույթ քաղաքական շահահարկումների առարկա է հանդիսանում: Այն մինչ օրս էլ մնում է նույն երերուն կարգավիճակում: Կասկածից վեր է, որ ոչ մի գեղարվեստական երկ, որքանով էլ այն հաջողված լինի, չի կարող ներազդել քաղաքական վերնախավերի վրա եւ դրդել նրանց ընդունելու պատմական ճշմարտությունը: Սակայն գրական ստեղծագործությունը, տվյալ դեպքում «Ճակատագրի սեւ շունը» գիրքը, ունակ է ներազդելու աշխարհի ժողովուրդների գիտակցության վրա, ճշմարիտ հասարակական կարծիք ձեւավորելու, նպաստավոր վերաբերմունք մշակելու հայության եւ հայոց ցեղասպանության հանդեպ, այսպիսով՝ ուղի հարթելու եղեռնը աշխարհին ճանաչել տալու հույժ կարեւոր խնդրում: Կարելի է վստահաբար ասել, որ Փիթեր Բալաքյանի «Ճակատագրի սեւ շունը» հուշագրությունը լիարժեքորեն կատարում է վերը նշված գործառույթները: Ուստի եւ ամերիկահայ գրողի երկը կարելի է հաստատապես դասել հայկական թեմաներ մարմնավորող լավագույն ստեղծագործությունների շարքը:

Տիգրան ՄԱԼՈՒՄՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ԱԼ-ԹԱՄԱՀԻ

Սկիզբը՝ թիվ 9-12, 14-15, 17, 19-20

Ահա թե մեզ ինչ պատմեց Աբու-լ-Հուսայն ալ-Խարիսի ան-Նախրսաբուսին.

«Մեր շեյխերից մեկն ինձ ասաց, որ Աբու Ջաֆար աշ-Շալմագանին շատ մոտ էր Համիդ Իբն Աբբասին, իսկ սա, վեզիր դառնալով, նրան հետը Բաղդադ տարավ, նրանից խորհուրդ էր հարցնում կարեւոր գործերի կապակցությամբ, ու նաեւ օգտվում էր նրա միջնորդությունից, հատկապես՝ լուրջ դեպքերում: Երբ Համիդը հրապարակեց սարսափելի հրաման ալ-Մուխասսին Իբն ալ-Ֆուրատի մասին, դա գրեց Իբն աշ-Շալմագանիին՝ նրան խնդրելով համոզել Համիդին՝ իրեն վերաբերվել ներողամտորեն եւ հորդորել նրան, ով աշխատում էր իրենից դրամ ստանալ, որ դադարեցնի նրան ծեծելն ու ստորացնելը եւ ժամանակ տալ վճարման համար: Աշ-Շալմագանին ձեռնամուխ եղավ այդ բանին եւ դիմեց Համիդ Իբն ալ-Աբբասին այդպիսի խնդրանքով: Համիդը նրան մերժեց, այնժամ աշ-Շալմագանին կրկնեց իր խնդրանքը մի բազմամարդ հավաքում՝ համոզելով Համիդին, բայց սա իրենն էր պնդում: Վերջապես նա ասաց. «Բերեք ալ-Մուխասսինին՝ այսինչի որդուն, եւ թող գան ստրուկները եւ մտրակներ բերեն»: Աշ-Շալմագանին համբուրեց Համիդի ձեռքը, բայց նա աներեր էր ու երդվեց, որ կհրամայի բոլոր հավաքվածների աչքի առաջ գանահարել ալ-Մուխասսինին: Ծառաները գնացին ալ-Մուխասսինի ետեւից, եւ երբ նրան բերին, աշ-Շալմագանին վեր կացավ ու դուրս ելավ՝ նախքան ալ-Մուխասսինի գալը: Համիդը բորբոքվեց ու կատաղության հասավ եւ պատրաստ էր աշ-Շալմագանիին բռնել եւ հաշվեհարդար տեսնել, բայց զսպվեց՝ ճչալով. «Մենք ալլահին ենք պատկանում եւ վերադառնում ենք նրան»: Եվ իր զայրույթը թափեց ալ-Մուխասսինի վրա եւ հասցրեց այն հարվածը, որի համար վերջինս մահու մատնեց նրան, երբ ալ-Մուխասսինի հայրը երրորդ անգամ վեզիր եղավ:

Իսկ աշ-Շալմագանին խոր հուսալքություն ապրեց: Նա ներկայացավ Համիդի հաջիբի ընդունարան եւ տրտնջաց իր դժվարություններից: Նրանք երկուսով միմյանց գանգատվում էին եւ անընդհատ ասում. «Նա խորհում է սպանել նախ ալ-Մուխասսինին, իսկ հետո՝ բոլորիս անխտիր: Ո՛վ մարդիկ, տեսնո՞ւմ եք՝ մինչեւ ուր կարող է հասնել մարդը»:

Իսկ Համիդը դրանից հետո թողեց ժողովը եւ ալ-Մուխասսինին բանտ ուղարկեց, ապա կանչեց իր հաջիբին եւ հարցրեց՝ որտեղ է աշ-Շալմագանին: «Մոտս է»,- պատասխանեց նա: «Իսկ ի՞նչ է անում նա»,- հարցրեց Համիդը: «Ոչինչ»,- պատասխանեց հաջիբը: Համիդը լռեց՝ ամաչելով, իսկ հետո կանչել տվեց աշ-Շալմագանիին:

Երբ սա եկավ, համիդն ասաց նրան. «Աբու Ջաֆար, մի՞թե իմ վերաբերմունքը քո նկատմամբ քեզ իրավունք է տալիս այդպիսի նվիրում ցուցաբերել իմ թշնամիներին եւ լքել ընդունարանը՝ տեսնելով, որ ես պատրաստվում եմ նրանց պատժել»: Նա պատասխանեց. «Ի՞նչ է ուզում վեզիրը՝ արդարությամբ դատե՞լ, թե՞ պարզապես ինձ ստիպել հավանություն տալ նրա գործողություններին»:- Ես կլսեմ եւ արդար կդատեմ»:

Աբու Ջաֆարն ասաց. «Վեզի՛ր, այս մարդն է, որի համար քեզ խնդրեցի: Պատկերացրու, որ նա բանջարեղեն վաճառող է եւ ոչ վեզիրի որդի, որի անցյալ վիճակը քեզ հայտնի է: Եվ այս պարագայում պետք չէր, որ դու մերժեիր իմ խնդրանքը, իսկ մերժելով՝ չպիտի ստիպեիր ինձ նստել ու նայել՝ ինչպես ես հաշվեհարդար տեսնում այն մարդու նկատմամբ, ում համար միջնորդել եմ: Բացի այդ, քեզ հայտնի է, որ բախտը փոփոխական է, եւ քո քայլը կարող է ծանր հետեւանքներ ունենալ, թող ալլահը քեզ պաշտպանի դրանցից: Ինչ վատ կլիներ քեզ, եթե նրա համար ներում խնդրելով՝ ես անվտանգ լինեի՝ չվախենալով, որ նրանք կսպառնան իմ հաջողությանը եւ կասեն. «Նա մեզ խաբեց եւ չմիջնորդեց մեզ համար: Եթե նա մեզ բարեկամաբար վերաբերվեր, վեզիրը, որ նրան այդքան մտերիմ է, չէր մերժի նրան, եւ նա ինքը չէր նստի ու նայի՝ ինչպես են մեզ ծեծում, ոչ այլ կերպ, քան զայրույթը մեզ վրա թափելով»: Եվ ի՞նչը կարող է քեզ համար լավ լինել, քան լավ կարծիքը քո բարեկամների ու մերձավորների մասին, որոնց բարի կհամարեին եւ չարի ատեցող, որ մարդիկ ասեին. «Եթե նա լավ մարդ չլիներ, իրեն չէր շրջապատի լավ մարդկանցով: Այդ քայլը երեւի նա կատարեց զայրույթից եւ դրամի կարիքից, իսկ ընդհանրապես նա բարի է, եւ դա նրա գլխավոր հատկանիշն է,- փոխանակ ասելու՝ «Նա ինքը վատ մարդ է եւ ահա շուրջը հավաքել է վատ մարդկանց»: Իմացիր, որ քեզնից հեռանալով՝ ես մտածում էի, որ ինձ կկործանես: Ես հասկացա, որ խախտել եմ վարքի կանոնները, միայն չգիտեի՝ որքան շատ պատիժ կստանամ: Բայց ինքս ինձ ասացի. «Ես արդար կվարվեմ, ինչպես կթելադրի առողջ բանականությունը, նույնիսկ եթե դրա համար տուժեմ: Եթե ինձ հաջողվի խուսափել պատժից, կլինի ալլահի ողորմությամբ, իսկ եթե զոհվեմ, ալլահն ինձ կփրկի»:

Համիդը ցնցվել էր նրա խոսքերից եւ ներողություն խնդրեց նրանից, հետո հորդորեց գնալ ու բռնել ալ-Մուխասսինի ձեռքը: Աշ-Շալմագանին գործեց իբրեւ միջնորդ եւ թեթեւացրեց ալ-Մուխասսինի տանջանքը:

Շարունակությունը՝ էջ 7

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ



Գարեգին Բես

Սկիզբը՝ էջ 4

Կատակերգություններով հարուստ է նաեւ **Ա. Քալանթարյանի** եւ **Ժ. Անանյանի** ստեղծագործությունը: Առաջինի «Բացեք ձեր աչքերը» (1973), «Կատակերգություններ» (1982), «Մի բուռ ծիծաղ» (1984) գրքերում զետեղված գործերից առավել հաջողված են «Բումերանգ» եւ «Քանի դեռ կամ» կատակերգությունները, որոնցից երկուսի նյութն էլ ժամանակակից կյանքն է: Դրության եւ խոսքի կոմիզմի հաջող ձեւերով առաջինում հեղինակը ներկայացնում է հայրերի եւ որդիների ավանդական հակադրությունը, իսկ մյուսում քննադատում մեր կյանքի ստվերոտ կողմերը: Ժ. Անանյանի «Տաքսի, տաքսի» (1987) գրքում զետեղված թատերգություններից առավել հաջողված է համանուն «Տաքսի, տաքսի» (1972) կատակերգությունը: Դեպքերը ծավալվում են մի տաքսիստի եւ նրա պետի աշխատանքային ու ընտանեկան հարաբերությունների, առաջինի տղայի եւ երկրորդի աղջկա սիրային կապի, խնամախոսության, սրանց ընդհարումների ու հաշտության ծիծաղաշարժ դեպքերի շուրջ:

Այս տարիներին կատակերգություններ գրել են նաեւ **Մ. Քոչարյանը** («Քեռիները քեֆ են անում», 1963), **Գ. Բեսը** («Աղյուսե մարդը», 1957, «Աշխարհն ինձնով է սկսվում», 1960, «Աղաֆոնը եւ իր փեսաները», 1965, «Կեցցե պաշտոնը», 1968) եւ ուրիշներ:

Կատակերգությունից զատ՝ ժամանակակից կյանքի գեղարվեստական պատկերն ուրվագծվել է նաեւ **դրամաներում**: Քանակը, դժբախտաբար, միշտ չէ, որ փոխհատուցվել է որակով եւ գրական այս տեսակի սահմաններում հաջողությունների կողքին թերացումներն ավելի ակնհայտ են: Հաջողվածներից հիշատակելի են Գ. Հարությունյանի «Խաչմերուկ» (1977), «Քո վերջին հանգրվանը» (1983) դրամաները, Զ. Խալափյանի «Հրաշք երեխա» (1973), Ա. Շահինյանի «Տրամվայը պարկ է գնում» (1981) ժողովածուներում զետեղված առանձին գործեր:

Գ. Հարությունյանի «Խաչմերուկը» կյանքի բարդ հանգույցների մեջ ներկայացվող ժամանակակից կյանքի մի լարված պատկեր է: Խաչմերուկում ոչ միայն պողոտաներն են հատվում, այլեւ՝ մարդկային ճակատագրերը: Գործողությունների կենտրոնում դեղագործ Վարդան Արամյանի կերպարն է: Ազնիվ ու բարի մի մարդ, որն իրեն պատասխանատու է զգում բոլորի բախտի համար: Նրան մարդկայնորեն մտատանջում են ե՛ւ դեղատան աշխատող Հասմիկի սիրո պատմությունը, ե՛ւ դռնապան Մուշեղի ու նրա հիմնարկի պետ Սանամյանի միջեւ առաջացած սուր բախումը, ե՛ւ երկրաբան Միքայելի ու նկարչուհի Աննայի ճակատագիրը... Գործողությունների մշտական մասնակից է եւ պահակ Գասպարը, որը կարծես բարոյական արժեկշռի է բերում ամբողջ անցուդարձը: Աննան որդեգրել է Երեխա, որը հիմա 15 տարեկան է: Նա երեխայի խնամքի համար նվիրել է իր կյանքը, իսկ հիմա նրան ծնող մայրը պահանջում է իր աղջկան... Աշխատանքային եւ ընտանեկան անհաջողությունները Միքայելին հանել են հունից... Վաղինակը տագնապների ու սպասումների մեջ է, նա պիտի երեխա ունենա... Սանամյանը կաշառակեր է ու լկտի եւ քանի որ մեջը շահ չունի, չի օգնում Մուշեղին բնակարան ստանալու հարցում... Արտասահմանից մի հայ եկել եւ հիացած, զարմացած՝ իր հայրենակիցներին է տնտղում եւ, ի վերջո, հանձին Արամյանի հայտնաբերում իր արյունակից ազգականին: Սա կյանքի խաչմերուկն է, որ անցնում է Արամյանի հոգու միջով եւ ծավալվում Գասպարի աչքի առաջ: Ի վերջո Արամյանի սիրտը չի դիմանում այդ լարվածությանը. ծննդյան օրը նա մահանում է՝ թողնելով իսկական մարդու բարի համբավ:

Այս «դրամատիկական պատմության» բեմականությունը պայմանավորված է կյանքի մեկ ակնթարթի մեջ մարդկային ճակատագրերի լարվածությունը բացահայտելու եւ գլխավոր հերոսի հոգեբանության ու գործողությունների մեջ խտացնելու հմտությամբ:

Այս գործում առկա դիպաշարային գիծը, կապված ամերիկահայ զբոսաշրջիկ Հովսեփ Մանսուրյանի կերպարի հետ, շարունակվում է «Քո վերջին հանգրվանը» դրամայում: Հովսեփի կերպարի առիթով կա շրջապատի մարդկանց նախատական վերաբերմունքը՝ կապված նրա ու նրա նմանների հեռակա հայրենասիրության հետ: Բայց եւ այս դեպքում Հովսեփն արդարանալու տեղ ունի, քանի որ նրա խաթարված կյանքն ամբողջ մի ժողովրդի պատմական ճակատագրի արտահայտություն է: Ահա նրա խոստովանությունը. «Ի՞նչ ըսեմ ձեզի, հայրենակիցներս: Ես ձեզմե չեմ նեղանար: Ձեզ համար դյուրին է ինձպեսներուն նախատինք ընելը: <...> Սակայն... մենք մեղավո՞ր ենք, որ ազգիս դաժան ճակատագիրը մեզի օտար ափերն է նետած... Աշխարհին մեջ միայնակ մարդ եղած եմ, բացարձակապես միայնակ: Ազգական չեմ տեսած... Ծագումս բուսական ըլլա, ըսես» («Խաչմերուկ» ժողովածու, էջ 371): Հովսեփը իր կամքով չէ, որ Ալաշկերտից հասել էր ԱՄՆ: «Քո վերջին հանգրվանը» դրամայում հեղինակը ներկայացնում է մեր կյանքում մշտապես առկա արտագաղթի պատկերը, կերտում այնպիսի մարդկանց կերպարներ (Հակոբ եւ Հարություն Հալաջյան եղբայրներ), ովքեր ընտանիքներով նախապատրաստվում են վերջնականապես թողնել հայրենիքը եւ մեկնել արտասահման: Իհարկե, կա կապվածություն, կա հոգեկան ցավ, կան նաեւ մարդիկ (ֆինբաժնի տեսուչ Պետրոսը), ովքեր անտանելի են դարձնում կյանքը: Բայց եւ հայրենիքը մարդու միակ ու վերջին հանգրվանն է, եւ այն լքելը՝ դավաճանություն: Ահա սա է հեղինակի դիրքորոշումը, որը եւ մասնակիորեն հաղթանակում է: Եղբայրներից ավագը՝ Հակոբը, վերջին պահին հրաժարվում է ճակատագրական որոշումից, ինչը, սակայն, համոզիչ չէ եւ կեղծ լավատեսություն է:

Արծարծելով շատ հրատապ կենսական հարց՝ հեղինակը կարող էր եւ պարտավոր էր ավելի մանրամասնել իր խոսքը, որպեսզի ամուր լինեին հերոսների արարքների հոգեբանական դրդապատճառները: Անմիջապես պատերազմից հետո՝ 1946-ից, լայն թափ ստացավ հայրենադարձությունը. արտասահմանի շատ երկրներից հայության հոծ զանգվածները (շուրջ 250 000 մարդ) վերադարձան իրենց նախնիների երկիրը: Բայց եւ ուրախության արցունքներին շատ շուտով եկան փոխարինելու ցավի նոպաները: Նոր էին հայրենադարձները հասել հայրենիք, երբ նրանցից շատերին անհիմն մեղադրանքներով աքսորեցին Սիբիր: Սա առաջին ու անսպասելի հարվածն էր: Հայրենադարձվածների մեծ մասն արհեստավորներ էին, արհեստը նրանց ապրուստի միջոցն էր: Նրանց աստիճանաբար արգելեցին նաեւ արհեստով զբաղվել: Իսկ ֆինբաժնի տեսուչներն էլ անընդհատ նստած էին նրանց շնչի վրա: Դա պետության ներկայության ձեւերից մեկն էր: Այս ամենին եկան ավելանալու լճացման տարիների արատները՝ բարոյական անկում, կաշառակերություն, մարդկանց եւ կադրերի հանդեպ տարվող անճիշտ քաղաքականություն: Եվ ահա, 1970-ական թթ. սկսած, երբ ԽՍՀՄ-ում պաշտոնական ուժ ստացավ մարդու իրավունքի պաշտպանության պայմանագիրը, շատ շատերը, այդ թվում նաեւ ազնիվ ու հայրենասեր մարդիկ, բռնեցին արտագաղթի ճանապարհը: Գ. Հարությունյանի դրաման մեծապես կշահեր, եթե նա խորությամբ վերլուծեր մեր կյանքի բարոյական, սոցիալական այս երեւույթները եւ ոչ թե հայրենասիրությունը հիմնավորեր սոսկ զգացմունքով կամ ծնողների արարքներին ընդդիմացող որդիներով (այս դեպքում արտագաղթին դեմ է Հակոբի որդի Վահագնը, որը եւ կասեցնում է հոր ծրագիրը):

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Ն. ԲԵՐԴՅԱԵՎ

«ԳՐԱԿԱՆ ԱՆԿՈՒՄ»-Ի ՄԱՍԻՆ

Սկիզբը՝ թիվ 21-22

«Գրական անկում» ժողովածուի հեղինակներն ամեն ինչ եւ ամենքին մի տեղում իրար խառնելով՝ ոչինչ չեն նկատում, ոչ մի բանում ըստ էության չեն խորանում, եւ ինչպես երեւում է, նույնիսկ անկարող են զգալու, որ իսկապես ո՛չ «մոդեռնիզմը», ո՛չ «միստիկան», ո՛չ էլ անորոշ նոր որոնումներն ու հոսանքները կարեւոր չեն, կարեւորը քրիստոնեությունն ու Քրիստոսն են: Նրանց միայն անհրաժեշտ է քրիստոնեության հետ հաշվի նստել, միայն քրիստոնեական խնդրից է կախված աշխարհի ճակատագիրը եւ ոչ թե մոդեռնիզմից, անորոշ միստիկայից եւ այլն: Եթե «Գրական անկում»-ի հեղինակներն ավելի նրբանկատ լինեին, ավելի հեռատես, ավելի քիչ հիպնոսացված լինեին «դասակարգային» խոսքերով, ապա իրենց բուն ուշադրությունը կսեւեռեին քրիստոնեական հավատի վերազարթոնքի վրա եւ այն չէին խառնի դեկադենտությանը, միստիկական անարխիզմին եւ նույնիսկ պոռնկագրությանը: Այդ ժամանակ, հնարավոր էր, «Գրական անկում» ժողովածուն այդչափ չդառնար մի գիրք, որը հասցեագրված է բացառապես փոքրահասակ երեխաներին, հնարավոր է՝ այն չլիներ այդչափ մանկական ու ծիծաղելի:

Ամեն ինչ իրար խառնելու գործելաձեւը, բացասելով խիստ հակադիր բաները, եւ դրանք իրար շաղկապելը շատ կոպիտ ու պարզունակ են: Եթե իրար խառնելը կատարվում է մտածված, ապա դա անբարեխղճություն է, եթե չմտածված, ապա վկայում է տաղանդի այն թերության մասին, այն տկար գիտակցության մասին, որ լավ կլիներ դուրս չսողային իրենց ծերպերից՝ նման քննադատություններ անելու նպատակով: Երբ որեւէ բռի հետադիմական իրար խառնելով մեկտեղում է ոչ միայն այնպիսի նրբերանգներ, ինչպիսիք են «բոլշեւիկներ» ու «մենշեւիկներ», սոցիալ-դեմոկրատներ ու սոցիալիստներ-հեղափոխականներ, այլ մեկտեղում է պահպանողականներին ու ծայրահեղականներին, սոցիալիստներին ու անարխիստներին եւ բոլորին անխտիր նույնիսկ կոչում «անարխիստներ», ապա նման վայրենության վրա բոլորը ծիծաղում են, եւ նրա կարծիքը ոչ ոք լուրջ չի ընդունում: Մի՞թե ավելի լավ, ավելի խելացի ու նրբանկատ են վարվում մարքսիստները, երբ ստանձնել են իրենց ուժերից վեր գործ: Նրանց նոր արվեստը խառնված է պոռնկագրությանը, կրոնափիլիսոփայական որոնումները՝ դեկադենտությանը, քրիստոնեությունը՝ միստիկական անարխիզմին, Չուլկովը՝ Բուլգակովին, Չուկովսկին՝ Մերեժկովսկուն, Պիլսկին՝ Վլ. Սոլովեւին, Վեդեկինդը՝ Դոստոեւսկուն եւ այսպես շարունակ: Ժամանակակից կյանքում իշխում է ոգու սարսափելի անարխիա, սակայն մարքսիստները կուրորեն այդ անարխիայում տեսնում են միասնություն:

Ժողովածուում ճշմարիտ շատ բան է ասված «մոդեռն մամուլի» մասին, նոր՝ իմպրեսիոնիստ տեսակի գրողի, փողոցային մոդեռնիզմի մասին: Իսկապես էլ այդ «մոդեռն մամուլը», այդ փողոցային մոդեռնիզմը եւ իմպրեսիոնիզը հեղափոխության եւ ժողովրդավարության ծնունդ են, այդ ամենը բնորոշ են հեղափոխական դեմոկրատացման անցումային դարաշրջանին, երբ գաղափարները դուրս են գալիս փողոց: Այստեղ ոչ մի մեղք չունեն նոր արվեստը, փիլիսոփայությունը, կրոնը. այստեղ մանավանդ կրոնը ոչ մի մեղք չունի: Նույնիսկ հոգու անարխիան, նույնիսկ գրական անկումը, որն արտացոլում է այդ անարխիան, հեղափոխության ծնունդն են: Հեղափոխությունը քանդում է քաոսի կապանքները: Կոլեկտիվ էրոտիզմն անգամ, ինչը սպառնում էր վերածվել վտանգավոր համաճարակի, արգասիքն է հեղափոխական դարաշրջանի՝ հին նորմերն ու արժեքները մերժող եւ նոր նորմեր ու արժեքներ դեռ չստեղծած հեղափոխության: Այդ ոգու անարխիան, այդ անկումը, ըստ էության, հակակրոնական են, եւ կրոնականը պետք է պայքարի այդ երեւույթների դեմ: Կրոնը դրական նորմերի ու արժեքների, ոգու անարխիայի ավարտի, անկման հաղթահարման ակունքն է:

Շարունակությունը՝ էջ 8

Մարկելլին Օլեսնիցկի

ՎԵՐԾՆՈՒՆԴ ԵՎ ՕՐՏՆՈՒԹՅՈՒՆ

Սկիզբը՝ թիվ 20-22

զ) Սրբացման ուղիները

Սրբացման ի՞նչ ուղիներ գոյություն ունեն: Այսինքն՝ ուղիներ, որոնց միջոցով կարելի հաղթել թշնամիներին եւ հաղթահարել գայթակղությունները, բարգավաճել քրիստոնեական կյանքի մեջ: Կան նաեւ կրոնական եւ զուտ բարոյական մեթոդներ: Առաջին ուղիները բարեբեր են, որոնցով մարդը հաղորդվում է Աստծո հետ: Դրանք են՝ բարեպաշտական մտածողությունը եւ Աստծո խոսքի ընթերցումը, աղոթքը եւ խորհուրդը (խոստովանություն եւ հաղորդություն): Սրանց մեջ առանձնանում է նաեւ ուխտը: Բարեպաշտական մտածողությունն ու Աստծո խոսքի ընթերցումն աստվածգիտության եւ աստվածախոհության հիմնական միջոցներն են: Իսկ աղոթքն ու խորհուրդը քրիստոնյայի խորհրդավոր մերձեցումն է Աստծո հետ եւ շնորհի ընկալումը: Ուխտն էլ ներառում է ինքնասահմանափակման եւ կրոնաբարոյական կյանքի հանդեպ մղումը:

Աճն առանց սնուցման, այսինքն՝ առանց դրսից նյութի յուրացման եւ կենսական ուժի, հնարավոր չէ: Այս ամենը վերաբերում է ե՛ւ մարմնական, ե՛ւ հոգեւոր աճին: Բարեպաշտ մտածողությամբ, Աստծո խոսքի ընթերցմամբ, աղոթքով, խոստովանությամբ մարդ էակն սկսում է ընկալել Աստծուն եւ հոգեպես սնվել: Այս միտքն արտահայտված է Սուրբ Գրքում, որտեղ Աստծո խոսքն անվանվում է հոգեւոր հաց. «Միայն հացով չի ապրի մարդ, այլ՝ այն ամեն խոսքով, որ դուրս է գալիս Աստծո բերանից» (Մատթ. Դ 4): Աստծո Որդու Արյունն ու Մարմինը համարվում են ճշմարիտ կերակուր եւ ըմպելիք. «Իմ մարմինը ճշմարիտ կերակուր է, եւ Իմ արյունը՝ ճշմարիտ ըմպելիք» (Հովհ. Զ 56): Քանի որ բոլոր արարածները, իրենց մեջ կրելով ուժերի եւ երեւույթների առատությունը, աստվածային հատկությունների արտացոլումն են, հոգեպես սնվում են մեզ շրջապատող աշխարհից, մարդկանցից եւ ֆիզիկական իրողություններից:

Սրբացման երկրորդ ուղին զուտ բարոյական է՝ ինքնաքննություն, աչալրջություն, ինքնավերահսկում եւ ինքնակրթություն: Աստվածային օրենքի լույսի տակ քրիստոնյայի կողմից իրականացվող ներաշխարհի քննումը ինքնաքննադատություն է, որի շնորհիվ մարդ արարածն իմանում է սեփական թերությունները եւ աշխատում ուղղել դրանք: Պողոս առաքյալը կոչ է անում սեփական անձը փորձության ենթարկել. «Թող մարդ նախ ինքն իրեն փորձի եւ ապա ուտի այդ հացից ու խմի այդ բաժակից... որովհետեւ եթե մենք մեզ քննեինք, ապա չէինք դատապարտվի» (Ա Կորնթ. ԺԱ 28-31): Ինքնաքննությունը չպետք է պատահական լինի, այլ հարկավոր է ամեն օր հետեւողական լինել: Ինքնաքննության ամենալավ ժամանակը գիշերն է: Ինքնաքննությանը նպաստում է մենությունը: Աստվածային հատկությունների արտացոլումն ունենալ՝ ինքնաքննությունը դարձնում է ինքնակրթություն: Ինքնակրթությունը բարոյականության եւ կատարելագործման ունակության ձեռքբերումն է: Այսպիսով՝ ամրանում է կամքի ուժը, եւ առաջանում լարվածություն: Համեմատելով քրիստոնյաներին «ասպարեզում վազողների» (Ա Կորնթ. Թ 24) հետ՝ Պողոս առաքյալը եփեսացիներին պատվիրում է. «Զորացե՛ք Տիրոջով եւ Նրա զորության կարողությամբ, առե՛ք Աստծո սպառազինությունը, որպեսզի կարողանաք չար օրում դեմ կանգնել չարին. եւ երբ ամեն ինչ կատարեք, հաստատո՛ւն կացեք՝ տեղում պինդ կանգնած, ձեր մեջքերը գոտեպնդված ճշմարտությամբ եւ հագած արդարության զրահը՝ ձեր ոտքերը ամրացրեք խաղաղության Ավետարանի պատրաստությամբ: Եվ առե՛ք փրկության սաղավարտն ու հոգու սուսերը, որ է Աստծո խոսքը» (Եփես. Զ 10-17), իսկ կողոսացիներին հետեւյալն է պատգամում. «Աղոթքի մեջ արթուն մնալ գոհությամբ» (Կողոս. Դ 2):

Շարունակությունը՝ էջ 8

ԱԹ-ԹԱՆԱՀԻ

Սկիզբը՝ էջ 5

❖❖❖

Ահա թե ինչ պատմեց Աբու-լ-Ֆադըլ Մուհամմադ Իբն Աբդալլահը.

«Ինձ Բաղդադի բարձրաստիճան շատ պաշտոնյաներ պատմել են, որ քրիստոնյա գրագիր ալ-Հուսայն Իբն Ամըրի մտերմությունն ալ-Մուկթաֆի խալիֆի հետ անհանգստացնում էր ալ-Քասիմ Իբն Ուբայդալլահին, ուստի լրտեսներ վարձեց՝ հանձնարարելով հետեւել նրան: Նա նույնիսկ ձեւացրեց, թե սիրահարված է երգչուհուն՝ ալ-Հուսայն Իբն Ամըրի սիրեցյալին, ամեն կերպ սիրաշահում էր նրան եւ հարցուփորձ էր անում ալ-Հուսայնի ու նրա որդու գործերի մասին: Այդ բաները երգչուհուն հայտնի էին ալ-Հուսայնի հետ ունեցած մտերմության բերումով: Ի վերջո նա ալ-Հուսայնին դուրս մղեց նրա սրտից այն աստիճանի, որ ալ-Հուսայնն ստիպված էր ընկերանալ նրա հետ հանուն նրա եւ մասնակցել նրա խնջույքներին: Ալ-Քասիմն ամեն կերպ ցույց էր տալիս իր բարեհաճությունը, իսկ ինքն այդ ընթացքում գժտեցրեց նրան որդու հետ, որը նույնպես սկսեց նրան հաղորդել ամեն կարգի տեղեկություններ հոր մասին:

Մի անգամ այդ որդին եկավ եւ ալ-Քասիմին հայտնեց, որ ալ-Հուսայնն ալ-Մուկթաֆիի հետ պայմանավորվել է վեզիրության շուրջը՝ խոստանալով մեծ գումար (նա նշեց՝ ինչպիսի) կորզել ալ-Քասիմից ու նրա համակիրներից: Նա հաղորդեց, որ ալ-Հուսայնը խալիֆի հետ պայմանավորվել է, որ ալ-Հուսայնի քարտուղար Իբրահիմ Իբն Համդան աշ-Շիրազին (Աբու-լ-Ֆադըլի խոսքով՝ նա Աբու-լ-Քասիմ Իբն ալ-Հուսայն Իբն Իբրահիմի պապն է՝ ալ-Մուշրիֆ մականունով) նշանակվելու է վեզիր եւ վարելու է այն գործերը, որ վստահված էին ալ-Քասիմ Իբն Ուբայդալլահին, որ Իբրահիմը սեւ հագուստ կկրի եւ կստանա վեզիրի կոչում, քանի որ ալ-Հուսայնն ինքը չցանկացավ իսլամ ընդունել, իսկ օտար հավատքի մարդուն վեզիր նշանակել չի կարելի, բայց որ բոլոր պետական գործերն ու պաշտոնները ենթակա կլինեն ալ-Հուսայնին, իսկ նոր վեզիրին կհանձնարարվի կատարել նրա բոլոր հրահանգները: Նա խալիֆի մոտ մուտք կունենա միայն հանդիսավոր պարագաներում եւ ընդունելությունների ժամանակ՝ արարողությունների կատարման համար՝ իր սեւ հագուստով, սուսերով ու գոտիով:

Նրա խոսքով՝ այդ ամենը կազմակերպել էր Ֆարիսը՝ ալ-Մուկթաֆիի ստնտուն: Խալիֆը խոստացավ, որ շատ շուտով (նա նույնիսկ օրը նշեց) ինքը կձերբակալի ալ-Քասիմին ու նրա մերձավորներին եւ կհանձնի ալ-Հուսայն Իբն Ամըրին:

Ալ-Քասիմ Իբն Ուբայդալլահը խորհրդակցեց Աբու-լ-Աբբաս Իբն ալ-Ֆուրատի հետ՝ ինչպես լավագույն ձեւով վարվի ինքը:

Աբու-լ-Աբբասն ասաց, որ ինքը հնար ունի օգնելու ալ-Քասիմին եւ փրկելու: Ալ-Քասիմը հարցրեց. «Իսկ դա ի՞նչ է»: «Նամակ,- պատասխանեց Աբու-լ-Աբբասը,- գրված ալ-Հուսայնի ձեռքով քո հորը, առաքված մի նահանգից, ուր ալ-Մուկթաֆին գնում էր ալ-Մութադիդի ժամանակ, երբ ալ-Հուսայն Իբն Ամըրն ալ-Մուկթաֆիի գրագիրն էր, եւ խալիֆը գիտե նրա ձեռագիրը: Այդ նամակում ալ-Հուսայնը քո հորը ծայրահեղ արտահայտություններով պատմում է ալ-Մուկթաֆիի ժլատության, նրա վատ բնավորության, չարության մասին, նրա արատների ու դաժանության, նրա թուլության եւ գործերը վարելու անկարողության մասին եւ քո հորը խորհուրդ է տալիս այդ ամենը հաղորդել ալ-Մութադիդին, որ նա շտապ մայրաքաղաք կանչի նրան, որպեսզի սա չխայտառակի խալիֆի իշխանությունը:

Քեզ համար լավագույն է՝ կազմել ամբողջ ունեցվածքիդ ցուցակը՝ ներառյալ հողերն ու տները, գնալ խալիֆի մոտ եւ թույլատրություն խնդրել, որ նա քեզ ընդունի միայնակ: Երբ քեզ տրամադրվի այդպիսի հնարավորություն, դու կընկնես նրա ոտքերը, արտասվելով կհանձնես քո ցուցակը եւ կխնդրես նրան՝ ընդունել այդ ամենը կամավոր եւ օրինական նվեր, բայց քեզ պահել իր մոտ ծառայության մեջ կամ խոստանալ անվտանգություն եւ քեզ չհանձնել ալ-Հուսայն Իբն Ամըրին, որին ոչինչ վստահել չի կարելի: Եթե խալիֆը հարցնի՝ ինչ հիմքեր կան այդպես ասելու, նրան պատասխանիր, որ ալ-Հուսայն Իբն Ամըրը մի գաղտնիք է բացահայտել, եւ դա հայտնի է դարձել քեզ: Հետո դու նրան կփոխանցես նամակը եւ կասես. «Դու ինչպե՞ս կարող ես, ուղղադավանների՛ առաջնորդ, քո կյանքը եւ պետության բարօրությունը վստահել մի մարդու, որ քո մասին այդպես է մտածում»:

Շարունակելի

Ռուսերենից թարգմ. Արշակ ՄԱԴՈՅԱՆԸ

«ԳՐԱԿԱՆ ԱՆԿՈՒՄ»-Ի ՄԱՍԻՆ

Ն. ԲԵՐԴՅԱԵՎ

Սկիզբը՝ էջ 6

Մատերիալիզմը չի կարող հաղթահարել անկումը, անարխիական՝ երկպառակությունը, այն այդ բոլորն ամրացնում է, ծնում բնազդների զեխություն:

Չի կարելի չընդունել, որ մեր մոդեռնիստական գրականությունն սկսում է նսեմանալ ու այլասերվել, մեր դեկադենտությունը գնալով բացահայտում է իր ներքին դատարկությունը: Այնուհանդերձ, այսպես կոչված՝ դեկեդենտներն են համարյա մեր միակ տաղանդները, եւ այդ ճամբարն է այսօր ներկայացնում մեր միակ գրականությունը: Հնարավոր է, որ դա տխուր է, բայց այդպես է: «Русское богатство»-ում եւ այլ՝ գրական առումով պահպանողական ամսագրերում ոչ մի գրականություն չկա, եւ գրականությամբ չեն էլ հետաքրքրվում, քանի որ չի կարելի գրականություն կոչել մի պատմություն այն մասին, որ իսպրավնիկը (գավառական ոստիկանապետը մինչհեղափոխական Ռուսաստանում- թրգմ.) վատ մարդ էր, իսկ ժողովրդական ուսուցիչը՝ լավ: Արվեստի ազատությունը, հարգանքը գեղարվեստական արժեքների հանդեպ, թվում է, մեր գիտակցությունը նվաճել է, եւ պետք է ընդունել, որ դրանում դրական վաստակը դեկադենտությանն է, որն ընդվզում է մեր վայրենության դեմ: Իսկ ինչի դեմ կարելի էր վճռական պայքար մղել, եթե ոչ դեկադենտության ու մոդեռնիզմը կրոնական հոսանքների հետ կապելուն:

Կապն այդ էմպիրիկորեն պատահական է եւ գտնվում է մշակույթի արտաքին ոլորտում: Ամսագրերը, որոնք մեր կրոնական փիլիսոփայական որոնումներն էին արտահայտում, ժամանակին առաջինը ապաստան տվեցին վտարանդի դեկադենտներին, քանի որ ընդունեցին նրանց տաղանդը, ընդունեցին նրանց արվեստի ինքնուրույն նշանակությունը եւ բարեկիրթ հարաբերությունների առումով առավել ազատ ու առաջադեմ էին: Կրոնական հոսանքների առանձին ներկայացուցիչներ իրենց անցյալով կապված էին դեկադենտությանը, բայց դա ոչինչ չի նշանակում, քանի որ կրոնական հոսանքների այլ ներկայացուցիչներ էլ անցյալում կապեր ունեին մարքսիզմի հետ: Ներքին դեկադենտությունն ու կրոնը, ինչպես եւ մարքսիզմն ու կրոնը խորապես հակադիր են, փոխադարձությունը բացառվում է, իսկ վերջնասահմանը կարող է լինել միայն թշնամությունը: Սեռի խնդիրների կրոնական պահվածքը պոռնոգրաֆիայի հետ խառնելն արդեն անհեթեթ բանակռվի գործելաձեւ է եւ կամ բութ անմտություն, հերքելն իսկ միտք չունի: Դժվար է խոսել մարդկանց հետ, որոնց համար սեռի մասին բուն հարցը կեղտ է, պոռնկագրության հարց: Հիվանդագին ու անկումային էրոտիզմը, որն այնպես տանջում է ժամանակակից մարդուն, միայն կարող է հաղթահարվել կրոնական պահվածքով եւ սեռի խնդրի կրոնական լուծմամբ: Մատերիալիզմով, կենսաբանությամբ, հիգիենիկ նորմերով եւ քաղքենիական բարոյականությամբ նման էրոտիզմից ոչ մեկին չես ազատի: Մեր երիտասարդությունը վաղուց արդեն աճել է բազարովականությունից, նա անզոր կերպով տենչում է մեկ այլ բան, եւ պարոն Բազարովն այլեւս չի կարող իրենը հետ վերադարձնել: Երիտասարդությանը տանջում է սեռի բարոյական հարցը, եւ նա չի կարողանում դուրս գալ առկա հակադրությունից, ինչն արդեն բերում-հանգեցնում է հարցի կրոնական խնդրին:

Ժողովածուի հեղինակները տպավորություն են ստեղծում, թե կանգնած են ամուր, անսասան հիմքի վրա, ինչը ոչ ոք եւ ոչինչ չի կարող սասանել: Իսկ ո՞րն է այդ հիմքը: Ամուր հիմքը նրանք համարում են մատերիալիստական մեծ հնոտին, ինչին փիլիսոփայության մեջ ոչ մի բանիմաց մարդ նույնիսկ չի էլ փորձում բանի տեղ դնել: Մատերիալիզմը մանկահասակների դպրոցական փիլիսոփայություն է, եւ փիլիսոփայության մեջ մատերիալիզմի մասին լրջորեն չի կարելի խոսել: Այդ հարցը լուծվում է փիլիսոփայության դասագրքում՝ ընդամենը տեղեկություններով: Վտանգավոր նորարարությունների, բոլոր տեսակի որոնումների, «անկումի» դեմ պարոնայք մարքսիստները կանգնեցնում են ծագումի սոցիալ-կենսաբանական գաղափարը, որին եւ վերջնականապես պետք է ենթարկվի եւ ստրկացվի անհատը: Սրբությունները շա՛տ հին են, շա՛տ պահպանողական: Ենթադրվում է, որ ծագումի, «անհրաժեշտության» հնագույն ակունքի նկատմամբ այդ բողոքարկումը եւ մարդու ստրկացումը չեն կարող ալեւս գերեվարվել եւ պաշտպանվել: Պրոլետարությունն արդեն դուրս է եկել բարուրից, նրանում եւս կարող են արթնանալ անհատը, մարդկային սեփական արժանապատվության զգացումը եւ կյանքի իմաստին ու աշխարհում իր կոչմանը հասնելու ձգտումը: Թեկուզ հենվեին խղճի, մտքի, մարդկային բնազդների վրա, թե չէ ի՞նչ է ծագումը, կենսաբանությունը, միջավայրին հարմարվելը եւ նման բաներ: Մարդկության բուն գաղափարը ծագումի նույնականությունը չէ՝ բառի կենսաբանական եւ սոցիալական իմաստով. այդ գաղափարը ենթադրում է կրոնական վիճակ:

Շարունակելի

Թարգմանությունը՝ Ա. ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆԻ

ՎԵՐՔԾՆՈՒՆԴ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ

Մարկելլին Օլեսնիցկի

Սկիզբը՝ էջ 7

Օգտագործելով ճգնակեցական նման միջոցները՝ քրիստոնյան հասնում է ինքնատիրապետման եւ ինքնահրաժարման: Ինքնատիրապետումն ու ինքնահրաժարումը նույնը չեն: Ինքնատիրապետումը հայտնի էր նաեւ հեթանոսներին. օրինակ՝ Սոկրատեսն ու ստոիկյանները պահանջում էին իրենց աշակերտներից, որ կյանքի բոլոր պարագաներում լինեն իրենց սեփական անձի տերը: Ինքնահրաժարումը միայն քրիստոնյաների մենաշնորհն է: Ինքնատիրապետման մեջ կարող է լինել եսասիրություն, իսկ ինքնահրաժարումը եսասիրությունից լիովին վերացումն է: Քրիստոնյայի ինքնահրաժարումն այն է, որ նա իր կամքը ենթարկում է Աստծուն եւ մահանում ինքն իր համար, որպեսզի հավերժ ապրի Աստծո մեջ: Այս ինքնահրաժարումը ծառայում է ինքնատիրապետմանը՝ որպես նրա բաղկացուցիչ մաս: Փրկիչը պատգամում է քրիստոնյաներին, որ եթե մեկն ուզում է գնալ Իր հետեւից, պետք է հրաժարվի ինքն իրենից եւ վերցնի իր խաչը ու գնա Իր հետեւից: Եվ ապա շարունակում, որ ով ուզում է փրկել սեփական հոգին, պետք է կորցնի այն, իսկ ով կկորցնի Նրա՝ Տիրոջ համար, պետք է գտնի:

Է) Սրբացման աստիճանը

Դեռեւս քրիստոնեության վաղ շրջանից հայտնի էր սրբացման երեք աստիճան: Առաջին աստիճանում գտնվում էին սրբացման ճանապարհ բռնած սկսնակները (incipientes), երկրորդում՝ շարունակողները (proficientes), երրորդում՝ կատարյալները (perfecti): Այս աստիճանային տարբերակումների հիմքը Սուրբ Գիրքն է: Հովհաննես առաքյալը տարբերակում է հոգեւոր հասունության երեք կողմ՝ որդյակներ, հայրեր եւ երիտասարդներ (Ա Հովհ. Բ 12-14): Աստվածաշունչ մատյանում հաճախ է հանդիպում «կատարյալ» բառը (Մատթ. ԺԹ 21), նաեւ՝ «Հիսուսով նորածին» արտահայտությունը (Ա Պետ. Բ 2, Եբր. Ե 13): Չնայած սրբացման աստիճանի տարբերակումները հարաբերական են, քանի որ մի կողմից հնարավոր է պատկանել սկսնակների խմբին, իսկ մյուս կողմից՝ շարունակողների, մի կողմից՝ շարունակողների խմբին, մյուս կողմից՝ կատարյալների: Սրբացման ճանապարհ բռնածները նրանք են, որոնք Հայտնության գրքի օրինակով գտնվում են «առաջին սիրո» վիճակում: Ոգեւորված եւ երջանկացած դարձով՝ նրանք կարծում են, որ «Հիսուսի լուծը թեթեւ է», եւ միեւնույն ժամանակ պատրաստ են Պողոս առաքյալի հետ կոչել. «Տե՛ր, լավ է, որ մենք այստեղ ենք, եթե կամենաս երեք տաղավար շինենք» (Մատթ. ԺՁ 4): Նրանք կարծում են, որ իրենց կամքը վաղուց եւեթ միավորված է Աստծո կամքին, եւ նրանց ոչինչ չի մնում՝ պահպանել Աստծո հետ միությունը: Նրանք հնարավոր են համարում համատեղել երկնային երանության եւ կատարելության՝ սրբացման հասնելու ձգտումը երկրավոր երջանկության հետ: Արդ, նրանք երկուսից էլ հրաժարվել չեն կարող:

Քրիստոնյաներին սարսափեցնում է անխուսափելի խաչը: Նրանք զարգանում եւ աճում են լռության եւ համբերության մեջ:

Սրբացման ճանապարհ բռնածները՝ շարունակողները, մարտիկներ են, որոնք համոզված են, որ իրենց կամքը դեռեւս չի միավորվել Աստծո կամքին, եւ որոնք պետք է շարունակեն պայքարել՝ այդ միությանը հասնելու համար: Այդ պայքարի ընթացքում, երբ հոգին հաղթում է մարմնին, սկսում է առավել զարգանալ՝ տրվելով ինքնամոռաց աղոթքին եւ կատարելով Տիրոջ կամքը: Սրա հետ մեկտեղ նրանք համոզված են, որ սրբացման համար անհրաժեշտ է մշտապես հրաժարվել երկրային երջանկությունից: Արդյունքում՝ սովորում են հրաժարվել, զրկվել, հանդուրժել եւ համակերպվել: Ի վերջո, քրիստոնյան կատարյալ է այն ժամանակ, երբ նրա կամքն իրապես միավորված է Աստծո կամքին, եւ նա այնքան խոր է թափանցել երկնային աշխարհ, որ նրա համար երկրային բոլոր վշտերն ու տանջանքները ոչինչ են, որի համար պատրաստ է հրաժարվել երկրային բոլոր ցանկություններից: Գիտակցելով իր տկարությունը՝ քրիստոնյան, այնուամենայնիվ, համոզված է, որ հաղթանակած է, քանի որ զգում է, որ իր մեջ բնակվում է Ամենազորը: (Փիլիպ. Դ 13): Ուստի, նա կարող է կրկնել Պողոս առաքյալի խոսքը. «Կենդանի եմ այսուհետեւ. բայց ոչ թե ես, այլ իմ մեջ ապրում է Քրիստոս» (Գաղ. Բ 20): Այդ պատճառով քրիստոնյայի հոգին լցվում է ուրախությամբ եւ խաղաղությամբ:

Բայց կատարելությանը, որին իրական կյանքում ձգտում է հասնել քրիստոնյան, հարաբերական է: Իրական կատարելությունն ու նմանությունն Աստծուն, որոնք տրվելու են քրիստոնյային հանդերձյալ կյանքում, անհնարին են երկրային կյանքում: Անգամ Պողոս առաքյալը, որ, անշուշտ, պետք է դասվի կատարյալների շարքը, իր ծերության շրջանում գրում է. «Ոչ թե արդեն հասել եմ նպատակին կամ արդեն կատարյալ եմ, այլ հետամուտ եմ, որ հասնեմ դրա՛ն, որի համար էլ բռնված եմ Քրիստոս Հիսուսից: Եղբայրնե՛ր, ես ինքս ինձ նպատակին հասած չեմ համարում» (Փիլիպ. Գ 12-13):

Ռուսերենից թարգմանեց Օլգա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլցյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ.փոստ՝ qh@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝
kh-tert.livejournal.com
krishayas.wordpress.com

Ստորագրված է տպագրության 17.12.2013 թ.

Տպաքանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ